



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 22(336) «06»12.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | | |
|---|---|----|
| ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | | |
| 261 | «Օտարերկրյա պետություններից ներմուծվող և Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային երինջների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության 194-Ն որոշումը..... | 4 |
| 262 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի N 294 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության 199-Ն որոշումը..... | 9 |
| 263 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի N 813 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 4-ի N 202-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսանողներին, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկման անձնակազմին «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ տեղափոխելու մասին» ԱՀ կառավարության 200-Ն որոշումը..... | 10 |
| 264 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության 204-Ն որոշումը..... | 12 |
| 265 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության 209-Ն որոշումը..... | 14 |
| 266 | «Արցախի Հանրապետության 2017-2018 ուսումնական տարվա պետական հանրակրթական, մանկապատանեկան արտադպրոցական և նախադպրոցական, բարձրագույն, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ցանցի հաստատման, մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերանվանման ու հիմնադրման և Լեռնային | |

| | | |
|-----|---|----|
| | Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի N 575 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության 213-Ն որոշումը... | 16 |
| 267 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի N 283-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության 214-Ն որոշումը..... | 25 |
| 268 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության 216-Ն որոշումը..... | 30 |
| 269 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության 217-Ն որոշումը..... | 31 |
| 270 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության 218-Ն որոշումը..... | 32 |
| 271 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության 219-Ն որոշումը..... | 33 |
| 272 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 14-ի N 158-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության 225-Ն որոշումը..... | 34 |
| 273 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի N 166 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության 231-Ն որոշումը..... | 37 |
| 274 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի N 29-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության 232-Ն որոշումը..... | 39 |
| 275 | «Զմեռային գորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության 233-Ն որոշումը..... | |
| 276 | «Արցախի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի N 52 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության 234-Ն որոշումը | 42 |
| 277 | «Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ կառավարության 235-Ն որոշումը..... | 51 |
| | ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ | |
| 278 | «Մի շարք կանոնադրություններ և կառուցվածքներ հաստատելու, | |

| | | |
|-----|--|----|
| | ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 15-Ն որոշումը..... | 59 |
| | ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ | |
| 279 | ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 2190/02/16թ. որոշումը..... | 90 |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2017թ.

N 194-Ն

ք. Ստեփանակերտ

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԵՐԻՆՋՆԵՐԻ
ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է**.

1. Հաստատել օտարերկրյա պետություններից ներմուծվող և Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային երինջների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ սույն որոշման հիման վրա կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ գործողությունը տարածվում է 2017 թվականի մայիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ԱՐՑԱՄԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԵՐԻՆՋՆԵՐԻ
ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են տեղական նախրի բարելավման և մթերատվության բարձրացման նպատակով օտարերկրյա պետություններից ներմուծվող և Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային երինջների արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների (այսուհետև՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **հայտատու**՝ տոհմային երինջ ձեռք բերելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետև՝ նախարարություն) դիմած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր:

2) **օտարերկրյա պետություններից ներմուծվող տոհմային երինջ**՝ սահմանված կարգով գրանցված խոշոր եղջերավոր կենդանիների ջերսեյ ցեղատեսակին պատկանող տավարի ընդհանրապես չծննդաբերած հղի էգ առանձնյակ:

3) **տոհմային երինջի արժեք**՝ տոհմային երինջի կենդանի քաշի 97 տոկոսը (3 տոկոսը չի հաշվարկվում՝ հաշվի առնելով կենդանու աղեստամոքսային ուղու պարունակությունը) բազմապատկած շուկայական գնով:

4) **տոհմային երինջի արժեքի մասնակի սուբսիդավորում**՝ տոհմային երինջի արժեքի մասնակի փոխհատուցում:

5) **փակ պահվածք**՝ անասնապահական մթերքների արտադրության շահավետ կազմակերպման, արտադրության ծավալի ավելացման, կենդանիների մթերատվության բարձրացման, նրանց անկորուստ վերարտադրությունն ապահովելու նպատակով տոհմային երինջն ամբողջ տարվա ընթացքում անասնաշենքերում և կից մեկուսացված տարածքում պահելը՝ բացառելով տոհմային երինջի տեղափոխումը հեռավոր արոտներ:

II. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Նախարարությունը համակարգում և վերահսկողություն է իրականացնում միջոցառման իրականացման գործընթացի նկատմամբ:

4. Հայտատուները նախարարության կողմից նշված ժամկետում նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 1 ձևի՝ նշելով գործունեության իրականացման վայրի, պայմանների ու տոհմային երինջների պահանջարկի մասին տեղեկությունները:

5. Մասնակի սուբսիդավորման ենթակա է ձեռքբերվելիք տոհմային երինջի արժեքի 35 տոկոսը: Տոհմային երինջի արժեքի 22,75 տոկոսը հայտատուների կողմից վճարվում է որպես կանխավճար, իսկ մնացած 42,25 տոկոսը տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետև՝ հիմնադրամ) միջոցով, անտոկոս փոխառության տեսքով, երեք տարի մարման ժամկետով և տոհմային երինջը երեք տարի փակ պահվածքով պարտադիր պահելու պայմանով: Հայտատուների կողմից կանխավճարը վճարվում է հիմնադրամին՝ անտոկոս փոխառության պայմանագրերը կնքելու պահին:

6. Փակ պահվածքով տոհմային երինջը երեք տարի չպահելու կամ անփույթ պահելու հետևանքով դրանց անկման դեպքում հայտատուների կողմից տոհմային երինջի չսուբսիդավորված արժեքը՝ հաշվանցած մինչև անկումը մարված

փոխառության գումարը, ենթակա է վերադարձման պետական բյուջե անկումը հայտնաբերելուց երեք ամսվա ընթացքում:

Տոհմային երինջի հարկադիր սպանող կամ հիվանդության պատճառով խոտանումը պետք է հիմնավորված լինի համայնքն սպասարկող անասնաբույժի ակտով:

7. Նախարարությունը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և հիմնադրամ է ներկայացնում տեղեկություններ՝ տոհմային երինջների ձեռքբերման պահանջարկի մասին:

8. Հիմնադրամը՝

1) օտարերկրյա պետության հետ կնքում է տոհմային երինջների ձեռքբերման պայմանագրեր:

2) հիմք ընդունելով սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկությունները՝ հայտատուների հետ կնքում է տոհմային երինջների ձեռքբերման համար անտոկոս փոխառության պայմանագրեր՝ նախատեսելով սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերից բխող պայմանների կատարումը սահմանող դրույթներ:

3) յուրաքանչյուր խմբաքանակի տրամադրումից հետո, տասնօրյա ժամկետում նախարարություն է ներկայացնում տեղեկություններ տոհմային երինջների ձեռքբերման և անտոկոս փոխառությունների տրամադրման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:

9. Նախարարությունը՝ հիմք ընդունելով սույն կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները, իրականացնում է սույն կարգի 5-րդ կետում նշված սուբսիդավորումը՝ հիմնադրամին տրամադրելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ 2017 թվականի պետական բյուջեում նախատեսված համապատասխան միջոցներից:

10. Գործունեության իրականացման վայրի փոփոխության դեպքում հայտատուները պարտավոր են գրավոր տեղեկացնել նախարարությանը:

11. Արցախի Հանրապետության անասնաբուժական սպասարկման կայանները՝ միջոցառման իրականացման գործընթացի վերահսկման նպատակով յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվանը՝ հաջորդող ամսվա տասը, նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ անասնաբուժության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տրամադրված տոհմային երինջների և դրանց պահվածքի մասին՝ համաձայն N 2 ձևի:

III. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

12. Օտարերկրյա պետություններից ներմուծվող և Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային երինջների արժեքի մասնակի սուբսիդավորման գործընթացի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) կենդանիների մթերատվության մակարդակի բարձրացում:

2) բարելավված և տոհմային բարձր մթերատու հատկանիշներով օժտված տնտեսությունների ցանցի ձևավորում:

3) անասնաբուժության վարման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման հնարավորություն:

4) գյուղական վայրերում վերամշակման նոր ձեռնարկությունների ստեղծման համար նպաստավոր պայմանների ապահովում:

5) անասնաբուժության մասնագիտացման շնորհիվ բնական կերահանդակների առավել արդյունավետ օգտագործում:

6) գյուղական վայրերում նոր աշխատատեղերի ստեղծում:

7) անասնաբուժական մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի
կամ սոցիալական քարտի համարը _____
Պետական գրանցման վկայականի համարը _____
ՀՎՀՀ _____
Գործունեության իրականացման վայրը _____

Դիմում եմ Ձեզ Օտարերկրյա պետություններից ներմուծվող և Արցախի Հանրապե-
տությունում ձեռքբերվելիք տոհմային երինջների արժեքի մասնակի սուբսիդավորման
կարգի համաձայն _____

(տոհմային երինջի ցեղը և քանակը)

ձեռք բերելու նպատակով:

Հայտին կից ներկայացվում են՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

(անուն, ազգանուն(անվանում))

(ստորագրությունը)

Կ.Տ.

« _____ » _____ 20__ թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ _____ շրջանում անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տրամադրված տոհմային երինջների և դրանց պահվածքի գնահատականի մասին

| Հ/Հ | Հայտատուի Ա.Ա.Հ. (անվանումը) | Գործունեության վայրը՝ համայնք, գյուղ | Հեռախոս | Տրամադրված տոհմային երինջի համարը | Տրամադրված տոհմային երինջի ցեղը | Տրամադրման ամիս, ամսաթիվ | Պահվածքի գնահատականը | Ծանոթություն |
|-----|------------------------------|--------------------------------------|---------|-----------------------------------|---------------------------------|--------------------------|----------------------|--------------|
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Անասնաբուժական սպասարկման կայանի տնօրեն

_____ Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2017թ.

N 199-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 28-Ի N 294 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ամենամյա դրամական օգնություն տալու մասին» N 294 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄՍՅԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՄԵՆԱՄՍՅԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման 1-ին կետում «երեխաներին նշանակել և վճարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական» բառերը փոխարինել «երեխաների համար սահմանել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծերության սոցիալական» բառերով.

3) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 1-ին կետում ««Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին» ԼՂՀ օրենքի (այսուհետ՝ օրենք)» բառերը փոխարինել ««Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերով, իսկ «օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններով, 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով, 28-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված կարգով» բառերը՝ «օրենքով սահմանված՝ երկու կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային, սոցիալական կամ զինվորական» բառերով.

բ. 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2017թ.

N 200-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 27-Ի N 813 ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի
N 202-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱԾՔԱՆԴԱԿ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ «ՇՈՒՉԻԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ք ն շ ու մ է**.

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի պետական ազրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի մասնաճյուղի գործունեությունն ապահովելու միջոցառումների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի թիվ 166 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 813 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 4-ի «Հայաստանի պետական ազրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի մասնաճյուղին անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հող հատկացնելու մասին» N 202-Ա որոշումները:

2. «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնի և բակալավրիատի ուսանողներին, պրոֆեսորադասախոսական, ուսումնասօժանողակ և սպասարկման անձնակազմին տեղափոխել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ՝ ըստ անհրաժեշտության բացելով առկա և հեռակա ուսուցման համակարգի համապատասխան մասնագիտական խմբեր, ստորաբաժանումներ, սահմանելով տարակարգեր:

3. «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույքն ու տարածքները նվիրատվության կարգով և հաշվեկշռի մնացորդները հանձնել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամին:

4. Սահմանել, որ.

1) տեղափոխված ուսանողների ուսումնառությունը «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամում կկազմակերպվի «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի գործող կրթական չափորոշիչներին համապատասխան.

2) տեղափոխված ուսանողներն առնվազն 2017-2018 ուսումնական տարում կպահպանեն ուսումնառության նախկին ձևը (անվճար, վճարովի), իսկ մինչև ուսման ավարտը՝ ուսման վարձավճարի նախկին չափերը.

3) տեղափոխված պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, սպասարկման անձնակազմի այն ներկայացուցիչները, որոնց համար «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղը հիմնական աշխատատեղ էր, առնվազն 2017-2018 ուսումնական տարում կպահպանեն իրենց աշխատավարձի նախկին չափերը.

4) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի թույլտվությամբ ուսանողներն իրենց ցանկությամբ կարող են տեղափոխվել և ուսումնառությունը շարունակել Արցախի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական մասնագիտական կրթական այլ հաստատությունների վճարովի ուսուցման համակարգի համապատասխան մասնագիտությունների գծով:

5. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին՝ ընդունել ի գիտություն, որ ուսումնական ավարտելուց հետո տեղափոխված ուսանողներին կշնորհվի «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կրկնակի ավարտական փաստաթուղթ:

6. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին.

1) կազմակերպել և մինչև 2017 թվականի դեկտեմբերի 1-ը ավարտին հասցնել տեղափոխման ողջ գործընթացը.

2) կազմակերպել և մինչև 2017 թվականի դեկտեմբերի 15-ը ավարտին հասցնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի նյութատեխնիկական բազա և գրականություն հանդիսացող գույքը նվիրատվության կարգով «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամին հանձնելու գործընթացը.

3) կազմակերպել և մինչև 2017 թվականի դեկտեմբերի 1-ը «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամին հանձնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի հաշվեկշռի մնացորդները:

7. Ստեփանակերտի քաղաքապետին՝ կազմակերպել և մինչև 2017 թվականի դեկտեմբերի 15-ը ավարտին հասցնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքները նվիրատվության կարգով «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամին հանձնելու գործընթացը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2017թ.

N 204-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1
ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

| Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | | | |
|-----------|-------|-----|--|---|-----------------|----------|-----------------|
| | | | | Առաջին եռամսյակ | Առաջին կիսամյակ | Ինն ամիս | Տարի |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ | - | - | - | - |
| | | | այդ թվում՝ | | | | |
| 08 | | | ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | - | - | - | - |
| | 2 | | Մշակութային ծառայություններ | - | - | - | 5500,0 |
| | | 5 | Արվեստ | - | - | - | 5500,0 |
| | | 06 | Կենտրոնացված կարգով մշակութային օջախների համար գույքի ձեռքբերում | - | - | - | 5500,0 |
| | | | ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն | - | - | - | 5500,0 |
| 4 | | | Կրոնական և հասարակական այլ ծառայություններ | | | | (5500,0) |
| | | 1 | Երիտասարդական ծրագրեր | | | | (5500,0) |
| | | 01 | Երիտասարդական միջոցառումներ | - | - | - | (5500,0) |
| | | | ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն | - | - | - | (5500,0) |

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2017թ.

N 209-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամ)

| Բաժին | Խումբ | Ղաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | Համամասնությունների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | | | |
|-----------|----------|-----|--|--|-----------------|---------|------------------|
| | | | | Առաջին եռամսյակ | Առաջին կիսամյակ | Իննամիս | Տարի |
| | | | ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ | - | - | - | - |
| | | | այդ թվում՝ | | | | |
| 10 | | | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | - | - | - | - |
| | 2 | | ՕՆերություն | - | - | - | (24000.0) |
| | | 1 | ՕՆերություն | - | - | - | (24000.0) |
| | | 04 | Օրենքով և ԼՂՀ Նախագահի հրամանագրով սահմանված կենսաթոշակներ և դրամական պարգևատրումներ | - | - | - | (24000.0) |
| | | | ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | (24000.0) |
| | 9 | | Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | - | - | - | 24000.0 |
| | | 2 | Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | - | - | - | 24000.0 |
| | | 10 | Պետական աջակցություն Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամին | - | - | - | 24000.0 |
| | | | ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | 24000.0 |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 նոյեմբերի 2017թ.

N 213-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
ԵՎ ԼԵՆՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 28-Ի N 575 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 71-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության 2017-2018 ուսումնական տարվա պետական հանրակրթական, մանկապատանեկան, արտադպրոցական և նախադպրոցական, բարձրագույն, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ցանցը՝ համաձայն հավելվածի:

2. «Ուղտասարի հիմնական դպրոց» և «Սարդարաշենի Կ. Շահբազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանել համապատասխանաբար «Ուղտասարի միջնակարգ դպրոց» և «Սարդարաշենի Կ. Շահբազյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների:

3. Դադարեցնել Ասկերանի շրջանի Սադաթաշենի հիմնական դպրոցի Ջրաղացների, Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտի միջնակարգ դպրոցի Հակի և Սարտակերտի շրջանի Քոլատակի միջնակարգ դպրոցի Թբղլվի մասնաճյուղերի գործունեությունը:

4. Հիմնադրման միջոցով ստեղծել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Ջրաղացների հիմնական դպրոց» և Քաշաթաղի շրջանի «Հակի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

5. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Ջրաղացների հիմնական դպրոց» և Քաշաթաղի շրջանի «Հակի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության

առարկան և նպատակը հանրակրթական բնույթի գործառույթների իրականացումն է:

6. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Ջրադացների հիմնական դպրոց» և Քաշաթաղի շրջանի «Հակի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե», «է» կետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները համապատասխանաբար վերապահել Արցախի Հանրապետության Ասկերանի և Քաշաթաղի շրջանների վարչակազմերին:

7. Թուլյատրել Ասկերանի շրջանի «Ջրադացների հիմնական դպրոց» և Քաշաթաղի շրջանի «Հակի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններին իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

- 1) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.
- 2) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
- 3) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.
- 4) սովորողների սննդի կազմակերպում.
- 5) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում:

8. Շահումյանի շրջանի «Եղեգնուտի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2018 թվականի հունվարի 1-ից բացել մեկ խումբ:

9. «Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան N8 միջնակարգ հոսքային դպրոց» և Քաշաթաղի շրջանի «Իշխանաձորի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում բացել համապատասխանաբար երկու և մեկ նախադպրոցական խմբեր:

10. «Հանրապետական մանկապատանեկան մարզադպրոց», «Ասկերանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում 2018 թվականի հունվարի 1-ից բացել համապատասխանաբար վեց և երեք մարզախմբեր:

11. «Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն», «Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններում 2018 թվականի հունվարի 1-ից բացել հնգական ստեղծագործական խմբեր, «Ասկերանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ երկու խումբ, իսկ «Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ութ խումբ՝ 2017 թվականի հոկտեմբերի 1-ից:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 575 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 19-րդ տողի «Սարդարաշենի Կ. Շահբազյանի անվան միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Սարդարաշենի Կ. Շահբազյանի անվան հիմնական դպրոց» բառերով:

2) 43-րդ տողի «Մաղաթաշենի հիմնական դպրոցի Ջրաղացների մասնաճյուղ» բառերը հանել:

3) 44-րդ տողից հետո լրացնել նոր 44.1-ին տողով՝ «Ջրաղացների հիմնական դպրոց» բառերով:

4) 63-րդ տողի «Քոլատակի միջնակարգ դպրոցի Թբղլվի մասնաճյուղ» բառերը հանել:

5) 190-րդ տողի «Լեռնահովիտի միջնակարգ դպրոցի Հակի մասնաճյուղ» բառերը հանել:

6) 216-րդ տողից հետո լրացնել նոր 217-րդ տողով՝ «Հակի հիմնական դպրոց» բառերով:

13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 30-ի N213-Ն որոշման

Ց Ա Ն Ց

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

| Շրջանը (Քաղաքը) | Քաղաքային վայրեր | | | | | Գյուղական վայրեր | | | | | Ընդամենը | | | | |
|--------------------|---------------------------|-----------------------------|----------------------------|-----------------------------|-----------------------------|---------------------------|-----------------------------|----------------------------|-----------------------------|-----------------------------|---------------------------|-----------------------------|----------------------------|-----------------------------|-----------------------------|
| | հիմնադրված (տոկոսային) | հիմնադրված մինչև 1992 թ. | հիմնադրված 1992 թ. հետո | հիմնադրված մինչև 1992 թ. | նրբորոշված մինչև 1992 թ. | հիմնադրված (տոկոսային) | հիմնադրված մինչև 1992 թ. | հիմնադրված 1992 թ. հետո | հիմնադրված մինչև 1992 թ. | նրբորոշված մինչև 1992 թ. | հիմնադրված (տոկոսային) | հիմնադրված մինչև 1992 թ. | հիմնադրված 1992 թ. հետո | հիմնադրված մինչև 1992 թ. | նրբորոշված մինչև 1992 թ. |
| Ստեփանակերտ | 9 | 1 | 1 | 1 | 12 | - | - | - | - | 9 | 1 | 1 | 1 | 12 | |
| Ասկերան | - | - | - | 1 | 1 | 9 | 23 | - | 32 | 9 | 23 | - | 1 | 33 | |
| Մարտակերտ | 1 | - | - | 1 | 2 | 7 | 26 | - | 33 | 8 | 26 | - | 1 | 35 | |
| Մարտունի | 4 | 1 | - | 2 | 7 | 8 | 21 | - | 29 | 12 | 22 | - | 2 | 36 | |
| Հաղրույթ | - | - | - | 1 | 1 | 9 | 15 | - | 24 | 9 | 15 | - | 1 | 25 | |
| Շուշի | - | - | - | 1 | 1 | 1 | 4 | - | 5 | 1 | 4 | - | 1 | 6 | |
| Շահումյան | - | 1 | - | - | 1 | 5 | 10 | - | 15 | 5 | 11 | - | - | 16 | |
| Քաշաթաղ | - | 4 | - | - | 4 | 11 | 38 | - | 49 | 11 | 42 | - | - | 53 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 14 | 7 | 1 | 7 | 29 | 50 | 137 | - | 187 | 64 | 144 | 1 | 7 | 216 | |

2. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՐԱՆ-ԼՐԱԿԱԶՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ

| Շրջանը (Քաղաքը) | Քաղաքային վայրեր | | | | Գյուղական վայրեր | | | | Ընդամենը | | | |
|--------------------|------------------|------------|-----------|------------|------------------|------------|------------|-------------|------------|------------|------------|-------------|
| | 1-4 | 5-9 | 10-12 | Ընդ. | 1-4 | 5-9 | 10-12 | Ընդ. | 1-4 | 5-9 | 10-12 | Ընդ. |
| Ստեփանակերտ | 135 | 139 | 37 | 311 | 0 | 0 | 0 | 0 | 135 | 139 | 37 | 311 |
| Ասկերան | 8 | 7 | 3 | 18 | 88,5 | 120 | 57 | 265,5 | 96,5 | 127 | 60 | 283,5 |
| Մարտակերտ | 16 | 18 | 6 | 40 | 106 | 140,5 | 65 | 311,5 | 122 | 158,5 | 71 | 351,5 |
| Մարտունի | 36 | 46 | 18 | 100 | 87 | 120,5 | 54 | 261,5 | 123 | 166,5 | 72 | 361,5 |
| Հաղրույթ | 8 | 10 | 8 | 26 | 70,5 | 98,5 | 44 | 213 | 78,5 | 108,5 | 52 | 239 |
| Շուշի | 10 | 10 | 3 | 23 | 10 | 13 | 6 | 29 | 20 | 23 | 9 | 52 |
| Շահումյան | 4 | 5 | 3 | 12 | 41 | 47,5 | 20 | 108,5 | 45 | 52,5 | 23 | 120,5 |
| Քաշաթաղ | 16 | 20 | 10 | 46 | 115 | 133 | 49 | 297 | 131 | 153 | 59 | 343 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 233 | 255 | 88 | 576 | 518 | 673 | 295 | 1486 | 751 | 928 | 383 | 2062 |

3. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

| Շրջանը (քաղաքը)/ դասարանը | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդամենը |
|---------------------------------|---|----|-----|----|---|----|-----|------|----|---|----|-----|----------|
| | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|-----------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|------------|--------------|
| Ստեփանակերտ | 952 | 865 | 981 | 825 | 768 | 700 | 626 | 644 | 626 | 332 | 338 | 135 | 7792 |
| Ասկերան | 267 | 289 | 266 | 205 | 242 | 196 | 187 | 206 | 178 | 142 | 158 | 112 | 2448 |
| Մարտակերտ | 308 | 379 | 348 | 328 | 282 | 287 | 253 | 307 | 278 | 189 | 208 | 132 | 3299 |
| Մարտունի | 322 | 352 | 391 | 327 | 334 | 324 | 279 | 319 | 311 | 238 | 257 | 163 | 3617 |
| Հաղրուֆ | 199 | 202 | 231 | 176 | 168 | 178 | 189 | 156 | 132 | 152 | 134 | 95 | 2012 |
| Շուշի | 72 | 84 | 90 | 75 | 57 | 67 | 68 | 65 | 67 | 27 | 26 | 21 | 719 |
| Շահումյան | 67 | 74 | 93 | 66 | 68 | 64 | 56 | 56 | 59 | 38 | 35 | 29 | 705 |
| Քաշաթաղ | 207 | 251 | 184 | 181 | 196 | 167 | 177 | 173 | 167 | 132 | 96 | 59 | 1990 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2394 | 2496 | 2584 | 2183 | 2115 | 1983 | 1835 | 1926 | 1818 | 1250 | 1252 | 746 | 22582 |

4. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Շրջանը (Քաղաքը) | Մանկ. ստեղծ. կենտրոններ | | | Մարզական դպրոցներ | | | Շախմատի դպրոց | | | ԸՆԴԱՄԵՆԸ | | |
|--------------------|----------------------------|----------------|---------------------|----------------------|----------------|---------------------|--------------------|----------------|---------------------|--------------------|----------------|---------------------|
| | Հիմնարկ. քանակը | Խմբերի թիվը | Սովորողների թիվը | Հիմնարկ. քանակը | Խմբերի թիվը | Սովորողների թիվը | Հիմնարկ. քանակը | Խմբերի թիվը | Սովորողների թիվը | Հիմնարկ. քանակը | Խմբերի թիվը | Սովորողների թիվը |
| Հանրապետական | | | | 1 | 30/6* | 335 | 1 | 27 | 285 | 2 | 57/6* | 620 |
| Ստեփանակերտ | 1 | 100/5* | 1225 | 1 | 51 | 605 | | | | 2 | 151/5* | 1830 |
| Ասկերան | 1 | 36/2* | 380 | 1 | 19/3* | 225 | | | | 2 | 55/5* | 605 |
| Մարտակերտ | 1 | 35 | 420 | 1 | 24 | 280 | | | | 2 | 59 | 700 |
| Մարտունի | 1 | 35 | 375 | 1 | 37 | 404 | | | | 2 | 72 | 779 |
| Հաղրուֆ | 1 | 25/5* | 320 | 1 | 21 | 252 | | | | 2 | 46/5* | 572 |
| Շուշի | 1 | 23/8** | 230 | 1 | 13 | 135 | | | | 2 | 36/8** | 365 |
| Շահումյան | 1 | 7 | 52 | 1 | 10 | 113 | | | | 2 | 17 | 165 |
| Քաշաթաղ | | | | 1 | 13 | 162 | | | | 1 | 13 | 162 |
| ԿՖՍԸ մարզադպրոց | | | | 1 | 25 | 253 | | | | 1 | 25 | 253 |
| Ընդամենը | 7 | 261/20 | 3002 | 10 | 243/9 | 2764 | 1 | 27 | 285 | 18 | 531/29 | 6051 |

* Խմբերը կգործեն 2018 թվականի հունվարի 1-ից

** Խմբերը կգործեն 2017 թվականի հոկտեմբերի 1-ից

5. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐ

| Շրջանը (Քաղաքը) | Երաժշտական դպրոցներ | | Արվեստի դպրոցներ | | Երաժշտական վարժարան | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|--------------------|------------------------|----------------|---------------------|----------------|------------------------|----------------|-------------|----------------|
| | քանա- կը | սաների թիվը | քանա- կը | սաների թիվը | քա- նակը | սաների թիվը | քա- նակը | սաների թիվը |
| Ստեփանակերտ | 1 | 528 | 1 | 571 | 1 | 52 | 3 | 1151 |
| Ասկերան | | | 2 | 320 | | | 2 | 320 |
| Մարտակերտ | | | 2 | 281 | | | 2 | 281 |

| | | | | | | | | |
|-----------------|----------|------------|-----------|-------------|----------|-----------|-----------|-------------|
| Մարտունի | | | 2 | 465 | | | 2 | 465 |
| Հաղրութ | | | 2 | 267 | | | 2 | 267 |
| Շուշի | | | 1 | 238 | | | 1 | 238 |
| Քաջաթաղ | | | 1 | 239 | | | 1 | 239 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 1 | 528 | 11 | 2381 | 1 | 52 | 13 | 2961 |

6. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

| Շրջանը (քաղաքը) | Հիմնարկների քանակը | Խմբերի թիվը | Երեխաների թիվը |
|------------------|--------------------|----------------|----------------|
| Ստեփանակերտ | 6 | 30 | 1110 |
| Ասկերանի շրջան | 6 | 10 | 225 |
| Մարտակերտի շրջան | 7/1* | 19/1* | 487 |
| Մարտունու շրջան | 9 | 29 | 712 |
| Հաղրութի շրջան | 4 | 7 | 176 |
| Շուշիի շրջան | 2 | 6 | 172 |
| Շահումյանի շրջան | 1 | 1/1** | 30 |
| Քաջաթաղի շրջան | 3 | 7 | 174 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 38/1 | 109/1** | 3086 |

* Թալիշի մանկապարտեզի գործունեությունը կվերսկսի 2018 թվականի սեպտեմբերի 1-ից

** Խմբերը կգործեն 2018 թվականի հունվարի 1-ից

7. ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԵՐ

| Շրջանը (քաղաքը) | Նախադարձական խմբերի քանակը | |
|------------------|----------------------------|----------------|
| | Խմբերի թիվը | Երեխաների թիվը |
| Ստեփանակերտ | 32 | 886 |
| Ասկերանի շրջան | 6 | 91 |
| Մարտակերտի շրջան | 8 | 131 |
| Մարտունու շրջան | 3 | 32 |
| Հաղրութի շրջան | 7 | 83 |
| Շուշիի շրջան | 2 | 38 |
| Շահումյանի շրջան | 3 | 55 |
| Քաջաթաղի շրջան | 2 | 22 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 63 | 1338 |

8. ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

| | Առկա ուսուցում | | | | |
|----------------------------|------------------------------------|-------------------------------------|-------------|------------------------------------|-------------------------------------|
| | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը | Ընդամենը | Որից՝ ավարտողներ | |
| | | | | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը |
| Ուսանողների թիվը (բակլավր) | 712 | 941 | 1653 | 137 | 182 |
| Մագիստրանտների թիվը | 222 | 128 | 350 | 107 | 83 |
| Ասպիրանտների թիվը | 6 | - | 6 | 1 | - |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 940 | 1069 | 2009 | 245 | 265 |

9. ՇՈՒՇԻՒՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

| | Առկա ուսուցում | | | | |
|-----------------------------|------------------------------------|-------------------------------------|------------|------------------------------------|-------------------------------------|
| | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը | Ընդամենը | Որից՝ ավարտողներ | |
| | | | | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը |
| Ուսանողների թիվը (բակալավր) | 77 | 121 | 198 | 12 | 10 |
| Մագիստրանտների թիվը | 59 | 31 | 90 | 24 | 18 |
| Ասպիրանտների թիվը | - | - | - | - | - |
| Ընդամենը | 136 | 152 | 288 | 36 | 28 |

9.1 ՇՈՒՇԻՒՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

| | Առկա ուսուցում | | | | |
|------------------|------------------------------------|-------------------------------------|------------|------------------------------------|-------------------------------------|
| | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը | Ընդամենը | Որից՝ ավարտողներ | |
| | | | | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը |
| Ուսանողների թիվը | 196 | 1 | 197 | - | - |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 196 | 1 | 197 | - | - |

10. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

| | Առկա ուսուցում | | | | |
|-----------------------------|------------------------------------|-------------------------------------|------------|------------------------------------|-------------------------------------|
| | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը | Ընդամենը | Որից՝ ավարտողներ | |
| | | | | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը |
| Ուսանողների թիվը (բակալավր) | 128 | 107 | 235 | 23 | 34 |
| Մագիստրանտների թիվը | - | - | - | - | - |
| Ընդամենը | 128 | 107 | 235 | 23 | 34 |

10.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱԿՅՈՒՂԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

| | Առկա ուսուցում | | | | |
|------------------|------------------------------------|-------------------------------------|-----------|------------------------------------|-------------------------------------|
| | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը | Ընդամենը՝ | Որից՝ ավարտողներ | |
| | | | | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը |
| Ուսանողների թիվը | 87 | 12 | 99 | 64 | 11 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 87 | 12 | 99 | 64 | 11 |

11. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Առկա ուսուցման սովորողների թիվը | | | | |
|--|------------------------------------|-------------------------------------|------------|------------------------------------|-------------------------------------|
| | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը | Ընդամենը | Որից՝ ավարտողներ | |
| | | | | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի ուսուցմամբ սովորողների թիվը |
| Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջ | 119 | 18 | 137 | 27 | - |
| Ստեփանակերտի պարարվեստի քոլեջ | 58 | - | 58 | 9 | - |
| Ստեփանակերտի բժշկական քոլեջ | 111 | 326 | 437 | 32 | 93 |
| Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջ | 104 | | 104 | 14 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 392 | 344 | 736 | 82 | 93 |

12. ԱՐՉԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

| | | Խմբերի թիվը | Անվճար ուսուցմամբ սովորողների թիվը | Վճարովի | Ընդամենը |
|---|--|-------------|------------------------------------|---------|------------|
| 1 | Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարան | 15 | 224 | | 224 |
| 2 | Մարտունու արհեստագործական ուսումնարան | 15 | 202 | | 202 |
| 3 | Շուշիի «Ե.Մոզան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամ | 14 | 129 | | 129 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 44 | 555 | | 555 |

Ծանոթություն՝

ա) Ստեփանակերտ քաղաքում գործում է Երևանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը՝ 12 դասարանով, 294 սովորողների ընդգրկմամբ և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմամարզական վարժարանը՝ 9 դասարանով, 114 սովորողների ընդգրկմամբ.

բ) Շուշի քաղաքում գործում է Դանիել Ղազարյանի անվան հանրակրթական երաժշտական մասնագիտացված ոչ պետական դպրոցը՝ 12 դասարանով, 181 սովորողների և դպրոցին կից նախադպրոցական 1 խմբի՝ 26 երեխայի ընդգրկմամբ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2017թ.

N 214-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 283-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» N 283-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի օգոստոսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 30-ի N 214-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի ապրիլի 26-ի N 283-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՏՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԼԵԶ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը | |
|--------|-------------------------------|---|----------------------|--|----------------------|
| | | Հիմնական կրթությամբ | Միջնակարգ կրթությամբ | Հիմնական կրթությամբ | Միջնակարգ կրթությամբ |
| 0402 | Մանկաբարձական գործ | 5 | 2 | 25 | 28 |
| 0405 | Դեղագործություն | - | 2 | - | 28 |
| 0406 | Քույրական գործ | 5 | 2 | 25 | 28 |
| 0418 | Բուժական գործ զինված ուժերում | 5 | - | 25 | - |
| | Պահուստային տեղեր | 6 | 3 | - | - |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 21 | 9 | 75 | 84 |

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԼԵԶ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը |
|--------|--------------------------|---|--|
|--------|--------------------------|---|--|

| | | | |
|------|--|-----------|-----------|
| 0501 | Գործիքային կատարողական արվեստ այդ թվում՝ դաշնամուր | 16 | 7 |
| | լարային գործիքներ (ջութակ) | 6 | 4 |
| | փողային գործիքներ | 2 | - |
| | ժողովրդական գործիքներ | 3 | 1 |
| | | 5 | 2 |
| 0502 | Երգեցողություն | 3 | 6 |
| 0503 | Երգչախմբավարություն | 2 | 1 |
| 0504 | Երաժշտության տեսություն | 1 | 1 |
| 0505 | Էստրադային երաժշտարվեստ | 2 | 5 |
| | Պահուստային տեղեր | 4 | - |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 28 | 20 |

3. ՇՈՒՇԻՒ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԼԵԶ

3.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քուլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը |
|--------|--|---|---|
| | | Հիմնական կրթությամբ | Հիմնական կրթությամբ |
| 0210 | Թարգմանություն և սպասարկման կազմակերպում | 5 | 10 |
| 0514 | Դիզայն ըստ ճյուղերի | 10 | 5 |
| 0515 | Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ | 10 | 5 |
| 0518 | Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն | 5 | 10 |
| 2014 | Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում | 5 | 10 |
| | Պահուստային տեղեր | 5 | - |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 40 | 40 |

3.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Քուլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|--------|--|--|
| 0517 | Գրադարանային գործ | 15 |
| 0601 | Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ | 15 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 30 |

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍԻ ՔՈՒԼԵԶ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը |
|--------|--------------------------|---|
|--------|--------------------------|---|

| | | |
|------|--------------------------|-----------|
| 0319 | Պարի ուսուցում | 6 |
| 0506 | Դասական պար | 6 |
| | Ժողովրդական պար | 6 |
| | Պահուստային տեղեր | 2 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 20 |

5. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ) | Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ) | Անվճար տեղերը (միջնակարգ կրթությամբ) | Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|--------|---|-------------------------------------|--------------------------------------|--------------------------------------|---------------------------------------|
| 1210 | Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա | 10 | 10 | 2 | 10 |
| 2014 | Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում | 10 | 10 | 2 | 10 |
| 2203 | Համակարգիչների շահագործում | 10 | 10 | 2 | 10 |
| 2304 | Վարավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 10 | 10 | 2 | 10 |
| 2311 | Հասարակական սնունդ | 10 | 10 | 2 | 10 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 10 | 10 | 2 | 10 |
| 2603 | Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա | 10 | 10 | 2 | 10 |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 10 | 10 | 2 | 10 |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում | 10 | 10 | 2 | 10 |
| | Պահուստային տեղեր | 10 | - | 2 | - |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 100 | 90 | 20 | 90 |

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ) | Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ) | Անվճար տեղերը (միջնակարգ կրթությամբ) | Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|--------|---|-------------------------------------|--------------------------------------|--------------------------------------|---------------------------------------|
| 1207 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա | 4 | 10 | 10 | 10 |
| 2203 | Համակարգիչների շահագործում | 4 | 10 | 10 | 10 |
| 2304 | Վարավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 4 | 10 | 10 | 10 |

| | | | | | |
|------|---|-----------|-----------|------------|-----------|
| 2311 | Հասարակական սնունդ | 4 | 10 | 10 | 10 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 4 | 10 | 10 | 10 |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 4 | 10 | 10 | 10 |
| 2905 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում | 4 | 10 | 10 | 10 |
| 2907 | Ատաղձագործություն, մանրահատակագործություն | 4 | 10 | 10 | 10 |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում | 4 | 10 | 10 | 10 |
| | Պահուստային տեղեր | 4 | - | 10 | - |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 40 | 90 | 100 | 90 |

7. ՇՈՒՇԻԻ «ԵԶՆԻԿ ՄՈԶՅԱՆ» ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ) | Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ) |
|--------|--|-------------------------------------|--------------------------------------|
| 1003 | Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում | 20 | 10 |
| 1006 | Զերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում | 20 | 10 |
| 1210 | Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա | 20 | 10 |
| 2603 | Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա | 15 | 10 |
| 2902 | Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում | 20 | 10 |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում | 20 | 10 |
| | Պահուստային տեղեր | 5 | - |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 120 | 60 |

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2017թ.

N 216-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 140 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի Մեծ Թաղերի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 2,0 հեկտար թփուտները փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2017թ.

N 217-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 638 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,5 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2017թ.

N 218-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 633 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վարդաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի նպատակային նշանակության 1,2 հեկտար այլ հողերը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 24,43 հեկտար թփուտները փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2017թ.

N 219-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,079 հեկտար բազմամյա տնկարկը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2017թ.

N 225-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 158-Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝

- 1) 4-րդ կետում «97 060,6» թիվը փոխարինել «99 460,6» թվով.
- 2) 4-րդ կետի 1-ին տողում «88 541,4» թիվը փոխարինել «90 941,4» թվով.
- 3) 11-րդ կետում՝
 - ա. «2 426 441,491» թիվը փոխարինել «2 433 041,491» թվով,
 - բ. 3-րդ տողում «50 000,0» թիվը փոխարինել «98 400,0» թվով,
 - գ. 6-րդ տողում «100 000,0» թիվը փոխարինել «24 700,0» թվով,
 - դ. «Օտարերկրյա պետություններից ներմուծվող խոշոր եղջերավոր կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորում» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«

| | |
|-----------------------------|---------|
| Անասնազերեզմանոցների փակում | 9 000,0 |
|-----------------------------|---------|

| | |
|--|----------|
| «Տոհմային կայան» փակ բաժնետիրական ընկերության համար սարքավորումների ձեռքբերում | 24 500,0 |
|--|----------|

».

4) 14-րդ կետում «50 000,0» թիվը փոխարինել «41 000,0» թվով:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար ՀՀ դրամ)

| Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | | | |
|-----------|-------|-----|---|---|-----------------|----------|-----------|
| | | | | Առաջին եռամսյակ | Առաջին կիսամյակ | Ինն ամիս | Տարի |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | - | - | - | - |
| | | | այդ թվում՝ | | | | |
| 04 | | | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | - | - | - | - |
| | 2 | | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն | - | - | - | - |
| | | 1 | Գյուղատնտեսություն | - | - | - | - |
| | | 05 | Պատվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում | - | - | - | 2 400.0 |
| | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | - | - | - | 2 400.0 |
| | | 12 | Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր | - | - | - | 6 600.0 |
| | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | - | - | - | 6 600.0 |
| | | 15 | Խոշոր եղջերավոր կենդանիների մտորային պահվածքի ծախսերի փոխհատուցում | - | - | - | (9 000.0) |
| | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | (9 000.0) |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2017թ.

N 231-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N166 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N166 որոշման մեջ, որոշմամբ հաստատված N 1 և N 2 հավելվածների վերնագրերում և տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

2. Որոշման 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների կառավարման լիազորությունը վերապահել որոշմամբ հաստատված N 1 հավելվածի ցանկում նշված լիազորված պետական մարմինն:»:

3. Որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Որոշմամբ հաստատված N2 հավելվածի 21-րդ և 81-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 231-Ն որոշման

«Հավելված N 1
ԼՂՀ կառավարության
«27» մայիսի 2003թ. N 166 որոշման

Ց Ա Ն Կ
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| ՀՀ | Պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը | Լիազորված պետական մարմինը |
|----|---|--|
| 1. | «Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն | Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |
| 2. | «Ստեփանակերտի պարարվեստի քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն | Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |
| 3. | «Ստեփանակերտի Թամարա Քամայանի անվան պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն | Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |
| 4. | «Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն | Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |

»:

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2017թ.

N 232-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությանը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը հաստատելու մասին» N 29-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) N 1 հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կամ 3-րդ» բառերը.

2) N 1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2) հեռակա ուսուցմամբ».

3) N 1 հավելվածից հանել 12-րդ կետը.

4) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

5) N 3 հավելվածից հանել «Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ», «021201.00.6 Դիզայն», «021201.01.6 Դիզայն» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականին և դրանից հետո միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 232-Ն որոշման

«Հավելված 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«26» հունվարի 2010 թվականի թիվ 29-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԵՁ

- 0402 Մանկաբարձական գործ
- 0405 Դեղագործություն
- 0406 Քույրական գործ
- 0418 Բուժական գործ զինված ուժերում

ՇՈՒՇԻԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԵՁ

- 0210 Թարգմանություն և սպասարկման կազմակերպում
- 0312 Դասավանդում տարրական դասարաններում
- 0514 Դիզայն ըստ ճյուղերի
- 0515 Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ
- 0518 Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն
- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 2014 Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում
- 2307 Զբոսաշրջություն

**«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 0602 Մենեջմենթ (Կառավարում)
- 0603 Ֆինանսներ
- 0612 Ապրանքագիտություն
- 2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում
- 2916 Քաղաքաշինական կադաստր
- 3101 Հողաշինարարություն
- 3102 Գյուղատնտեսագիտություն
- 3104 Անասնաբուժություն
- 3106 Գյուղատնտեսության մեքենայացում

**ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

- 0207 Թարգմանություն և գործավարություն

- 0302 Հայոց լեզվի դասավանդում
- 0303 Ռուսաց լեզվի դասավանդում
- 0307 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ
- 0312 Դասավանդում տարրական դասարաններում
- 0313 Նախադպրոցական կրթություն
- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 0602 Մենեջմենթ (Կառավարում)
- 0603 Ֆինանսներ
- 2203 Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրավորում
- 2307 Զբոսաշրջություն
- 2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2017թ.

N 234-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 52 ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասին, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ռ ու մ է**:

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» N 52 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Արցախի Հանրապետությունում միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) պետական հավատարմագրման կարգը՝ անկախ դրանց գերատեսչական ենթակայությունից և կազմակերպչիրավական ձևից:

2. Պետական հավատարմագրումն (այսուհետ՝ հավատարմագրում) իրականացվում է հետևյալ գործընթացներով՝

1) ինստիտուցիոնալ հավատարմագրում.

2) ըստ մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրում (այսուհետ՝ ծրագրային հավատարմագրում):

3. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարբերաբար կրկնվող (շրջափոխային) պարտադիր գործընթաց է Արցախի Հանրապետության տարածքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների համար:

4. Սույն կարգի դրույթներին համապատասխան՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար ուսումնական հաստատությունները պետք է դիմեն մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը:

5. Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է կամավորության սկզբունքով՝ միայն ինստիտուցիոնալ հավատարմագրման դրական արդյունքի դեպքում՝ բացառությամբ բժշկական մասնագիտությունների կրթական ծրագրերի:

6. Ուսումնական հաստատության մասնաճյուղերն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում անցնում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատության հայտի հիման վրա, մայր ուսումնական հաստատության կազմում՝ առանձին ժամանակացույցով: Մասնաճյուղի համար պետական հավատարմագիր տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

7. Ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ):

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

8. Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունը պետք է՝

1) ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ համապատասխան ձևաթղթի.

2) ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը (web.survey.anqa.am):

9. Բնաստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն իրականացվում է երեք հաջորդական փուլերով՝

1) *առաջին փուլ*՝ ինստիտուցիոնալ կարողությունների ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ըստ սույն կարգի բաղկացուցիչ մաս հանդիսացող ինքնավերլուծության.

2) *երկրորդ փուլ*՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, կրթական և որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ օրենքով սահմանված ուսումնական հաստատության տեսակին ներկայացվող պահանջներին, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ինստիտուցիոնալ հավատարմագրման չափորոշիչներին համապատասխան (այսուհետ՝ փորձաքննություն).

3) *երրորդ փուլ*՝ ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքներով ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ հավատարմագրման հանձնաժողով) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա. շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում,

բ. շնորհել պայմանագրային ինստիտուցիոնալ հավատարմագրում,

գ. մերժել ինստիտուցիոնալ հավատարմագրումը:

10. Դիմում-հայտի և ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը և որոշման կայացումն իրականացվում են սույն կարգի պահանջների համաձայն:

11. Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հավատարմագրված ուսումնական հաստատությանը տրվում է հավատարմագրման վկայական, որը ստորագրում է ՈԱԱԿ-ի տնօրենը:

12. Մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՈԱԱԿ-ի հավատարմագրման գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում:

13. Երկու աշխատանքային օրվա ընթացքում հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը և տնօրենի կողմից ստորագրված հավատարմագրման վկայականը վավերացման համար ուղարկվում է կրթության, գիտության և սպորտի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

14. Նախարարությունը հավատարմագրման վկայականը պատշաճ կերպով հանձնում է ուսումնական հաստատությանը: Ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունները համարվում են հավատարմագրված՝ հավատարմագրման գրանցամատյանում գրանցվելու պահից: ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է իր կայքում և զանգվածային լրատվամիջոցներով:

15. Բնաստիտուցիոնալ հավատարմագիրը տրվում է չորս կամ վեց տարի ժամկետով: Ուսումնական հաստատությունը ստանում է հավատարմագրում՝ չորս տարի ժամկետով, եթե փորձագիտական զեկույցում նշված թերությունները ոչ էական են՝ ցածր ռիսկայնությամբ, ոչ հրատապ և կարող են վերացվել չորս տարվա ընթացքում: Չորս տարի ժամկետով հավատարմագրում շնորհելու վերաբերյալ որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում, ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների՝ հաստատության կողմից հաստատված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը: Հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը պարտավոր է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում և արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ:

16. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրումը տրվում է երկու տարի ժամկետով, եթե փորձագիտական զեկույցում նշված թերություններն էական են՝ բարձր

ռիսկայնությամբ, և դրանց վերացումը հրատապ է, սակայն դրանք կարող են վերացվել երկու տարվա ընթացքում: Երկու տարի ժամկետով պայմանական հավատարմագրում շնորհելու վերաբերյալ որոշման հրապարակումից հետո երկամսյա ժամկետում ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների հաստատության կողմից հաստատված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը:

17. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը չի կարող դիմել ծրագրային հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար:

18. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման մասին: ՈԱԱԿ-ը քննարկում է զեկույցը և 15 աշխատանքային օրվա ընթացքում իր գրավոր եզրակացությունը ներկայացնում ուսումնական հաստատությանն ու հավատարմագրման հանձնաժողովին:

19. Փորձագիտական զեկույցում նշված թերությունները սահմանված ժամկետում չվերացվելու դեպքում պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրումը կորցնում է իր ուժը: Այդ դեպքում տվյալ ուսումնական հաստատության վրա տարածվում են սույն կարգի 22-րդ կետով նախատեսված սահմանափակումները:

20. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը փորձագիտական զեկույցում նշված թերությունները վերացնելու դեպքում դիմում է ինստիտուցիոնալ հավատարմագրման նշված թերությունների վերացման մասով: Փորձագիտական հանձնաժողովի կողմից սույն կարգի 64-70-րդ կետերի համաձայն պատրաստվում և ներկայացվում է զեկույց:

21. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում ուսումնական հաստատությունը չի կարող բացել նոր մասնագիտություն: Նույն ուսումնական հաստատությունը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ստանալ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում:

22. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը մերժելու դեպքում հաջորդ ուսումնական տարվանից մինչև ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալը դադարեցվում է պետության կողմից ուսումնական հաստատությանը հատկացվող ուսանողական նպաստների ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կրթական բոլոր աստիճանների, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը, իսկ ուսումնական հաստատությունը, սույն կարգի համաձայն, երկրորդ անգամ կարող է անցնել ինստիտուցիոնալ հավատարմագրում երկու տարի հետո:

23. Երկու անգամ անընդմեջ ինստիտուցիոնալ հավատարմագրում չստանալու դեպքում ուսումնական հաստատությանը տրված լիցենզիայի գործողությունը կասեցվում է:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

24. Ծրագրային հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունը պետք է՝

1) ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ համապատասխան ձևաթղթի.

2) ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը (web.survey.anqa.am).

4) ներկայացնի պետական հավատարմագրման վկայականը.

25. Ծրագրային հավատարմագրման գործընթացն իրականացվում է երեք հաջորդական փուլերով՝

1) առաջին փուլ՝ մասնագիտության կրթական ծրագրի, ուսումնական գործունեության ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ինքնավերլուծություն՝ ըստ համապատասխան ձևաչափի.

2) երկրորդ փուլ՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, ուսումնական գործունեության արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչների և Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխան.

3) երրորդ փուլ՝ ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքներով ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա. շնորհել ծրագրային հավատարմագրում,

բ. շնորհել պայմանական ծրագրային հավատարմագրում,

գ. մերժել ծրագրային հավատարմագրումը:

26. Դիմում-հայտի և ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը և որոշման կայացումն իրականացվում են սույն կարգի պահանջների համաձայն:

27. Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրերը գրանցվում են հավատարմագրման գրանցամատյանում:

28. Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հավատարմագրված ուսումնական հաստատությանը տրվում է հավատարմագրման վկայական, որը ստորագրում է ՈԱԱԿ-ի տնօրենը:

29. Մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՈԱԱԿ-ի հավատարմագրման գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում:

30. Երկու աշխատանքային օրվա ընթացքում հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը և տնօրենի կողմից ստորագրված հավատարմագրման վկայականը վավերացման համար ուղարկվում է նախարարություն:

31. Նախարարությունը հավատարմագրման վկայականը պատշաճ կերպով հանձնում է ուսումնական հաստատությանը: Ուսումնական հաստատության ծրագրային կարողությունները համարվում են հավատարմագրված՝ հավատարմագրման գրանցամատյանում գրանցվելու պահից: ՈԱԱԿ-ը ծրագրային հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է իր կայքում և զանգվածային լրատվամիջոցներով:

32. Ծրագրային հավատարմագրումը տրվում է հինգ տարի ժամկետով:

33. Ուսումնական հաստատությունը կարող է ստանալ պայմանական ծրագրային հավատարմագրում, եթե փորձագիտական զեկույցում նշված թերությունները հնարավոր է շտկել ոչ ավելի, քան երկու տարվա ընթացքում:

34. Պայմանական ծրագրային հավատարմագրում ձեռք բերելու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունն իրականացված բարելավման միջոցառումների մասին գրավոր զեկույց է ներկայացնում ՈԱԱԿ:

35. Փորձագիտական զեկույցում նշված թերությունները սահմանված ժամկետում չվերացվելու դեպքում պետական հավատարմագրման վկայականի ներդիրը կորցնում է իր ուժը:

36. Պայմանական ծրագրային հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը փորձագիտական զեկույցում նշված թերությունները վերացնելու դեպքում դիմում է ծրագրային հավատարմագրման նոր գործընթացին մասնակցելու համար:

37. Նույն ուսումնական հաստատությունը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ստանալ պայմանական ծրագրային հավատարմագրում:

38. Ծրագրային հավատարմագրումը մերժելու դեպքում հաջորդ ուսումնական տարվանից մինչև ծրագրային հավատարմագրում ստանալը դադարեցվում է ուսումնական հաստատության տվյալ կրթական ծրագրով պետության կողմից

հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կրթական բոլոր աստիճանների տեղերի ֆինանսավորումը: Եթե մերժվել է բակալավրի կրթական ծրագրի հավատարմագրումը, ապա հաջորդ ուսումնական տարվանից մինչև ծրագրային հավատարմագրում ստանալը դադարեցվում է ուսումնական հաստատությանը պետության կողմից հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի ֆինանսավորումը բոլոր երեք կրթական աստիճաններում: Ուսումնական հաստատությունը սահմանված ընթացակարգով կարող է անցնել ծրագրային հավատարմագրում մեկ տարի հետո:

39. Հավատարմագրման վկայականի և դրա ներդիրի (ներդիրների) տպագրությունը, հաշվառումը և պահպանումն ապահովում է ՈԱԱԿ-ը: Հավատարմագրման վկայականում նշվում են վկայականի համարը և սերիան, ուսումնական հաստատության լրիվ անվանումը, ուսումնական հաստատության կամ մասնաճյուղի գտնվելու վայրը, գործունեության վայրը, հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը և ամսաթիվը, գրանցման համարը, վկայականը տալու ամսաթիվը և գործողության ժամկետը: Հավատարմագրման վկայականի ներդիրում (ներդիրներում) նշվում են պետական հավատարմագրման վկայականի համարը և սերիան, ներդիրի համարը, և սերիան, ուսումնական հաստատության կամ մասնաճյուղի լրիվ անվանումը, հավատարմագրված մասնագիտության դասիչը և անվանումը, որակավորման աստիճանը, հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը և ամսաթիվը, ներդիրը տալու ամսաթիվը և գործողության ժամկետը: Ներդիրը (ներդիրները) վավեր է (են) միայն վկայականի առկայության դեպքում:

40. Ուսումնական հաստատությունը պարտավոր է ուսանողներին տեղեկացնել ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին:

41. Ուսումնական հաստատություններն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման մասին որոշումները կարող են երկշաբաթյա ժամկետում բողոքարկել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդին՝ փորձաքննության անցկացման ձեռնարկով սահմանված կարգով, կամ դատարան՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

42. Չի թույլատրվում պետական հավատարմագրման վկայականը և ներդիրը օտարել, գրավ դնել կամ փոխանցել մեկ այլ անձի:

IV. ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

43. Դիմում-հայտերը կարող են ներկայացվել ՈԱԱԿ ամբողջ տարվա ընթացքում:

44. ՈԱԱԿ-ը դիմում-հայտն ընդունելու կամ մերժելու հարցը քննարկում և դրա մասին դիմողին գրավոր ծանուցում է ոչ ուշ, քան դիմումն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: ՈԱԱԿ-ը մերժում է դիմում-հայտը, եթե՝

1) ուսումնական հաստատությունը չունի կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

2) ներկայացված փաստաթղթերի փաթեթը թերի է.

3) ներկայացված փաստաթղթերի փաթեթը պարունակում է ոչ հավաստի տեղեկություններ.

4) ուսումնական հաստատության գործունեությունը կասեցված է.

5) լրացված չէ ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

45. Սույն կարգի 44-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում հայտատուն հնգօրյա ժամկետում թերությունները վերացնելու դեպքում կարող է դիմում- հայտը կրկին ներկայացնել ՈԱԱԿ:

46. ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնում է դիմում-հայտն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:

47. Դիմում-հայտի ընդունումից հետո մեկ շաբաթվա ընթացքում դիմողի և ՈԱԱԿ-ի միջև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիր: Պայմանագրում հստակ նշվում են գործընթացի մեկնարկի ամսաթիվը և ժամանակացույցը:

48. Գործընթացի մեկնարկից հետո 12 շաբաթվա ընթացքում ուսումնական հաստատությունը պարտավոր է ՈԱԱԿ ներկայացնել ինքնավերլուծություն:

49. Ինքնավերլուծությունը ներկայացվում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ հայերենով, անհրաժեշտության դեպքում՝ նաև անգլերենով:

50. Ինքնավերլուծության հայերեն և անգլերեն տեքստերի միջև հակասությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

51. Ինքնավերլուծությանը կից ներկայացվում է ձևաչափով պահանջվող հիմնավորող փաստաթղթերի փաթեթը:

52. Ինքնավերլուծությունը ստանալուց հետո հինգ շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ը ընդունում է որոշում ինքնավերլուծությունն ընդունելու կամ վերադարձնելու մասին:

53. ՈԱԱԿ-ը ինքնավերլուծությունը վերադարձնում է, եթե

1) այն չի համապատասխանում ՈԱԱԿ-ի մշակած միասնական ձևաչափին.

2) առկա են բովանդակային, տեխնիկական, կառուցվածքային կամ այլ թերություններ.

3) ինքնավերլուծության մեջ արտացոլված տվյալները ոչ հավաստի են:

54. Նշված թերությունները վերացնելու համար ՈԱԱԿ-ը սահմանում է մեկամսյա ժամկետ:

55. Ինքնավերլուծությունում առկա թերությունները սահմանված ժամկետում վերացնելու և այն կրկին ներկայացնելու դեպքում ՈԱԱԿ-ը ընդունում է նոր որոշում ինքնավերլուծությունն ընդունելու մասին:

56. Ինքնավերլուծությունն ընդունելու մասին որոշման ընդունման պահից հինգշաբաթյա ժամկետում ՈԱԱԿ-ը ուսումնական հաստատություն է գրավոր ներկայացնում փորձագիտական խմբի կազմը: Փորձագիտական խմբի ձևավորման կարգը հաստատվում է ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից:

57. Երկշաբաթյա ժամկետում ՈԱԱԿ-ը ուսումնական հաստատության հետ համաձայնեցնում է փորձագիտական խմբի կազմը:

58. Փորձագիտական խմբի կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով՝ մինչև փորձագիտական խմբի նոր կազմի հաստատումը: Մեկամսյա ժամկետի ավարտից հետո փորձագիտական խմբի նոր կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողությունը դադարեցվում է:

59. Հավատագրման հանձնաժողովի հետ համաձայնեցված փորձագետների խմբի վերջնական կազմը ուսումնական հաստատության հետ համաձայնեցվելուց հետո հաստատվում է ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագետների հետ կնքվում են վճարովի ծառայությունների մատուցման մասին պայմանագրեր:

60. ՈԱԱԿ-ի կողմից փորձագիտական խմբի կազմը հաստատվելու օրվանից 12 շաբաթվա ընթացքում փորձագիտական խումբն այցելում է ուսումնական հաստատություն (այսուհետ՝ փորձագիտական այց):

61. Փորձագիտական այցի ժամանակացույցը, պայմանները, ընթացակարգը և տևողությունը սահմանվում են ուսումնական հաստատության և ՈԱԱԿ-ի փոխադարձ համաձայնությամբ:

62. Փորձագիտական այցը կարող է տևել 3-7 օր:

63. Փորձագիտական այցից հետո, անհրաժեշտության դեպքում, ՈԱԱԿ-ը իրավունք ունի պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր:

64. Փորձագիտական այցի ավարտից հետո վեցշաբաթյա ժամկետում փորձագիտական խումբը պատրաստում և ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական գեկույցի նախնական տարբերակը:

65. ՈԱԱԿ-ը փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ստանալու օրվանից հետո մեկշաբաթյա ժամկետում այն ուղարկում է ուսումնական հաստատություն:

66. Ուսումնական հաստատությունը կարող է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր դիտողություններն ու առարկությունները երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՈԱԱԿ, իսկ առարկություններ ու դիտողություններ չունենալու դեպքում հավաստում է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր համաձայնությունը: Ուսումնական հաստատության առարկություններն ու դիտողություններն ուսումնասիրությամբ հիմնավորված ճանաչվելու դեպքում փորձագիտական զեկույցի նախնական տարբերակում կատարվում է համապատասխան փոփոխություն:

67. Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի ներկայացումից հետո յոթշաբաթյա ժամկետում փորձագետների խումբը վերջնական փորձագիտական զեկույցը ներկայացնում է ՈԱԱԿ:

68. Հիմք ընդունելով ուսումնական հաստատության ինքնավերլուծությունը, փորձագետների զեկույցը և ուսումնական հաստատության կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը՝ ՈԱԱԿ-ը կազմում է վերջնական եզրակացության նախագիծ և այն ներկայացնում հավատարմագրման հանձնաժողով՝ որոշում ընդունելու համար:

69. Հավատարմագրման եզրակացության օրինակելի ձևը սահմանում է ՈԱԱԿ-ը:

70. Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի ներկայացումից հետո 12 շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ը պաշտոնական համացանցային կայք-էջում հրապարակում է ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին եզրակացություններն ու հավատարմագրման խորհրդի որոշումները:

V. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

71. Բնստիտուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման ժամկետի ավարտից առնվազն մեկ տարի առաջ ուսումնական հաստատությունը կարող է դիմել ՈԱԱԿ՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման նոր գործընթացներ սկսելու համար:

72. Բնստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման համար նախատեսված փորձաքննության, գործուղման և այլ ծախսերը, անկախ գործընթացի արդյունքից, պայմանագրային կարգով հատուցում է ուսումնական հաստատությունը՝ ՈԱԱԿ-ի կողմից հաստատված և հրապարակված սակագների համաձայն: Ուսումնական հաստատությունները ծախսերի համար նախատեսվող գումարը պետք է փոխանցեն ՈԱԱԿ-ի հաշվարկային հաշվին:

73. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե

1) հավատարմագրի վավերականության ժամկետը լրացել է:

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է ուսումնական հաստատության գործունեությունը:

3) լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել:

74. Հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին հավատարմագրման հանձնաժողովի որոշումը հրապարակվում է ՈԱԱԿ-ի կայքում, և հավատարմագրման գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում:

75. Ուսումնական հաստատություն ինստիտուցիոնալ հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր է իր ստացած պետական հավատարմագրման վկայականը վերադարձնել ՈԱԱԿ:

76. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարանում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

77. Ուսումնական հաստատությունը պետական հավատարմագրման վկայականը կորցնելու դեպքում դիմում է ՈԱԱԿ, որը տասնհինգօրյա ժամկետում տալիս է «Կրկնօրինակ» նշագրմամբ պետական հավատարմագրման նոր վկայական:

78. Սույն կարգի բաղկացուցիչ մասն են՝

1) ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափերը.

2) փորձաքննության անցկացման ձեռնարկը:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2017թ.

N 235-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասին, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ կետին և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**:

1. Հաստատել Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության մասնագիտական կրթական ծրագրի հավատարմագրման չափանիշները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ԱՌԻՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

| ՀՀ | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|---|--|
| 1. | Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալված գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՀ): | <p>ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՀ-ին,</p> <p>բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները,</p> <p>գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:</p> |

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

| ՀՀ | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|---|---|
| 2. | ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները: | <p>ա. հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,</p> <p>բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը,</p> <p>գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման ու մշտադիտարկման հստակ մեխանիզմներ,</p> <p>դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա,</p> <p>ե. քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում),</p> <p>զ. ՄՈՒՀ-ում գործում են ՄԿԾ-ի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ,</p> <p>է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:</p> |

3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

| ՀՀ | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|---|--|
| 3. | Մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ) հա- | ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարա- |

| | |
|---|--|
| <p>մնապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը ու միջազգայնացմանը:</p> | <p>գրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը, դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:</p> |
|---|--|

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

| Չափանիշը | Չափորոշիչները |
|--|---|
| <p>4. ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:</p> | <p>ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր, գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությունը նպաստելու համար, դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման ու որակի ապահովման մեխանիզմներ:</p> |

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍՏԱՌՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

| Չափանիշը | Չափորոշիչները |
|--|---|
| <p>5. ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:</p> | <p>ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար, դ. պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապա-</p> |

| | |
|--|--|
| | <p>տասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը, գ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնառական աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:</p> |
|--|--|

6. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|---|--|
| 6. | <p>ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:</p> | <p>ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:</p> |

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|---|--|
| 7. | <p>ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:</p> | <p>ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, բ. ՄՈՒՀ-ն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար, գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ, գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին, է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:</p> |

8. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|---|--|
| 8. | ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը: | ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ, բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ: |

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|--|---|
| 9. | Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը: | ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց, գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար: |

10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

| | Չափանիշը | Չափորոշիչը |
|-----|---|---|
| 10. | ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: | ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, բ. որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, գ. ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, դ. որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է, ե. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար, զ. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար: |

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԸ

| ՀՀ | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|--|--|
| 1. | Մասնագիտությունների կրթական ծրագրերն (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշիչի պահանջներին, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած առաքելությանը: | ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, բ. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, գ. ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների, դ. ՄԿԾ-ն համապատասխանում է որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ), մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշիչին, ե. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ ու նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանն ու միջազգայնացմանը, զ. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները, է. առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը: |

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

| ՀՀ | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|---|---|
| 2. | ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար: | ա. ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ ու դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանն ու զարգացմանը, գ. ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին, դ. հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը: |

3. ԴԱՍԱՎԱՆՊՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

| ՀՀ | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|--|--|
| 3. | ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը: | ա. ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար, բ. ՄԿԾ-ն իրականացվում է՝ հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները, գ. առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ: |

4. ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|--|--|
| 4. | ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը: | <p>ա. ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին,</p> <p>բ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ,</p> <p>գ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ,</p> <p>դ. ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները,</p> <p>ե. ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագրության դեմ:</p> |

5. ՀԵՏԱԳՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|--|--|
| 5. | ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ուստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև: | <p>ա. ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները,</p> <p>բ. ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին,</p> <p>գ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը,</p> <p>դ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:</p> |

6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|--|---|
| 6. | ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր: | <p>ա. ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը,</p> <p>բ. ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն,</p> <p>գ. ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:</p> |

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

| | Չափանիշը | Չափորոշիչները |
|----|--|---|
| 7. | ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը: | <p>ա. որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար,</p> <p>բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր),</p> <p>գ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով</p> |

| | |
|--|---|
| | <p>հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար, դ. ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում, ե. ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:</p> |
|--|---|

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 15-Ն

**ՄԻ ՇԱՐՔ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԻ ՇԱՐՔ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Դատական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 73-րդ հոդվածով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» ենթակետերով Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել՝

1) «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների.

2) «Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի աշխատակազմ «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն թիվ 3 և թիվ 4 հավելվածների.

3) «Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի աշխատակազմ «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն թիվ 5 և թիվ 6 հավելվածների.

4) «Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի աշխատակազմ «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն թիվ 7 և թիվ 8 հավելվածների.

5) «Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայություն «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն թիվ 9 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահի 2008 թվականի հունիսի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի ստեղծելու, կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1-Ն, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում ստեղծելու, «Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի աշխատակազմ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշումների 2-րդ կետերը, ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահի 2009 թվականի հունիսի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի աշխատակազմ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 06-Ն և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշումները քացառությամբ ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահի 2008 թվականի հունիսի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1-Ն որոշման 2-րդ կետի բ) ենթակետի, որը գործում է մինչև սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի թիվ 2 հավելվածի ուժի մեջ մտնելը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը օրվան հաջորդող տասներորդ օրը, քացառությամբ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի թիվ 2 հավելվածի և 5-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

**1 դեկտեմբերի 2017թ.
ք.Ստեփանակերտ**

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ»
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտը (այսուհետ՝ Դեպարտամենտ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով Արցախի Հանրապետության դատարաններին (այսուհետ՝ Դատարաններ), Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովին (այսուհետ՝ Դատավորների ընդհանուր ժողով), Արցախի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդին (այսուհետ՝ Բարձրագույն դատական խորհուրդ), Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդին (այսուհետ՝ Դատարանների նախագահների խորհուրդ) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը:

2. Դեպարտամենտը Դատարաններին, Դատավորների ընդհանուր ժողովին, Բարձրագույն դատական խորհրդին և Դատարանների նախագահների խորհրդին վերապահված լիազորությունների լիարժեք, արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունն ապահովում է կենտրոնական մարմնի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

3. Դեպարտամենտի հիմնադիրը Արցախի Հանրապետությունն է՝ ի դեմս Դատարանների նախագահների խորհրդի:

4. Դեպարտամենտն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է դատական համակարգի լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելուն:

5. Դեպարտամենտի իրավական վիճակն ու գործունեության կարգը սահմանվում են Արցախի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ, Բարձրագույն դատական խորհրդի որոշումներով, Դատարանների նախագահների խորհրդի որոշումներով և այլ իրավական ակտերով:

6. Դեպարտամենտն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, ամրացված գույք և իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Դեպարտամենտը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Դեպարտամենտի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

8. Դեպարտամենտի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Արցախի Հանրապետությունը:

9. Դեպարտամենտն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով, իր հայերեն և ռուսերեն անվանմամբ կլոր կնիք: Դեպարտամենտն ունի

Դատարանների նախագահների խորհրդի կողմից հաստատված միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

10. Դեպարտամենտի լրիվ անվանումն է՝ «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկ:

11. Դեպարտամենտի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42:

II. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

12. Դեպարտամենտն իր խնդիրների իրականացման համար կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների, առանձնացված ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց միջոցով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) իրականացնում է կադրային քաղաքականությունը, ֆինանսական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումներ՝ ուղղված դատական իշխանության արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծմանը.

2) իրականացնում է Դատարանների, Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Դատարանների նախագահների խորհրդի աշխատակազմի գործառույթները.

3) նախապատրաստում է Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի նիստերը.

4) վարում և ամփոփում է դատական վիճակագրությունը, ամփոփում է դատական պրակտիկան.

5) վարում է դատավորների անձնական գործերը.

6) ապահովում է դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների, դատական ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և դատարանի տարածքի պահպանումը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից.

7) ապահովում է Դատական դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը, գույքի, ինչպես նաև շենքի և սպասարկման տարածքի պահպանությունը.

8) կազմակերպում է Արցախի Հանրապետության պաշտոնական ինտերնետային կայքի աշխատանքը.

9) կազմակերպում է արխիվային գործի վարումը.

10) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

III. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

13. Դեպարտամենտի կառուցվածքը ներառում է՝

1) կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները.

2) առանձնացված ստորաբաժանումները.

14. Դեպարտամենտի կառուցվածքը հաստատում է հիմնադիրը՝ հիմք ընդունելով օրենքով և իր որոշումներով սահմանված առանձնացված ստորաբաժանումները:

15. Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները կազմված են բաժիններից և այլ ստորաբաժանումներից:

16. Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներն են Դատարանների աշխատակազմերը և դատական կարգադրիչների ծառայությունը:

17. Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներն իրականացնում են Դեպարտամենտի առանձին գործառնություններ և հանդես են գալիս Արցախի Հանրապետության անունից:

18. Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է հիմնադիրը:

19. Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և Դեպարտամենտի ու իր հայերեն անվանումներով կլոր կնիք, Դատարանների նախագահների խորհրդի կողմից հաստատված ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

IV . ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

20. Դեպարտամենտը կառավարում է Դատարանների նախագահների խորհուրդը: Դեպարտամենտի կառավարման առանձին գործառնություններ իրականացնում է Դատարանների նախագահների խորհրդի նախագահը: Դեպարտամենտը ենթակա և հաշվետու է Դատարանների նախագահների խորհրդին՝ հիմնադրին և Դատարանների նախագահների խորհրդի նախագահին:

21. Դատարանների նախագահների խորհուրդը՝

1) Դեպարտամենտի խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Դեպարտամենտի գործունեության հիմնական ուղղությունները և գործառնությունները.

2) Դատարանների նախագահների խորհրդի նախագահի ներկայացմամբ նշանակում և ազատում է Դեպարտամենտի ղեկավարին.

3) հաստատում է դատական ծառայության պաշտոնների անձնագրերը.

4) հաստատում և փոփոխում է Դեպարտամենտի, նրա առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները և կառուցվածքը.

5) հաստատում և փոփոխում է դատական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը.

6) սահմանում է դատական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգը և աշխատակարգը.

7) սահմանում է դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող փակ մրցույթի կարգը.

8) սահմանում է դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող բաց մրցույթի թեստերի կազմման և թեստավորման կարգը.

9) սահմանում է բաց մրցույթի հարցազրույցի անցկացման և թեկնածուների հատկանիշների գնահատման կարգը.

10) սահմանում է դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը.

11) սահմանում է դատական ծառայողի բնութագիրը Դատարանների նախագահների խորհրդի նախագահին կամ Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնելու ժամկետը.

12) սահմանում է դատական ծառայողների վերապատրաստման կարգը.

13) սահմանում է դատական ծառայողների անձնական գործերի վարման կարգը.

14) դատական ծառայողի՝ դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում Դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ մինչև 5 տարի ժամկետով կարող է երկարաձգել դատական ծառայողի պաշտոնավարման ժամկետը.

15) որոշում է Դեպարտամենտի կենտրոնական մարմնին, առանձնացված ստորաբաժանումներին հանձնվող գույքի կազմը և չափը.

16) վերակազմակերպում կամ դադարեցնում է Դեպարտամենտի գործունեությունը.

17) լսում է Դեպարտամենտի գործունեության հաշվետվությունները, քննարկում է դրանց գործունեության ստուգման արդյունքները.

18) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

22. Դատարանների նախագահների խորհրդի նախագահը՝

1) Դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ նշանակում և ազատում է Դեպարտամենտի ղեկավարի տեղակալին, Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին:

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Դեպարտամենտի ղեկավարի և իր կողմից նշանակվող դատական ծառայողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Դեպարտամենտի ղեկավարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները և կարգադրությունները:

4) Դեպարտամենտի ղեկավարին տրամադրում է արձակուրդ:

5) վերահսկողություն է իրականացնում Դեպարտամենտին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ:

6) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենքներով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

23. Դեպարտամենտի անմիջական ղեկավարումն իրականացնում է Դեպարտամենտի ղեկավարը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դեպարտամենտի ղեկավարի լիազորությունները սահմանվում են «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով, սույն կանոնադրությամբ, Դատարանների նախագահների խորհրդի որոշումներով և իրավական այլ ակտերով:

24. Դեպարտամենտի ղեկավարը ենթակա և հաշվետու է Դատարանների նախագահների խորհրդին և Դատարանների նախագահների խորհրդի նախագահին:

25. Դեպարտամենտի ղեկավարը դատական ծառայող է, որն ապահովում է դատական ծառայության իրականացումը:

26. Դեպարտամենտի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում գործարքներ:

2) օրենքով, իրավական այլ ակտերով, հիմնադրի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

3) տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

4) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված Դեպարտամենտի գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ Դեպարտամենտի գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություն է ներկայացնում Դատարանների նախագահների խորհրդին:

5) ապահովում է Դեպարտամենտի բնականոն գործունեությունը:

6) համակարգում է դատական կարգադրիչների ծառայության գործունեությունը:

7) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկում և ստուգում դրանց կատարումը:

8) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է դատական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության պաշտոններում, ինչպես նաև Դեպարտամենտի կենտրոնական մարմնի աշխատողներին, կիրառում նրանց նկատմամբ խրախուսանք և կարգապահական տույժեր:

9) շնորհում է դատական կարգադրիչների կոչումներ, դատական ծառայության դասային աստիճաններ՝ բացառությամբ Արցախի Հանրապետության դատական ծառայության 1-ին և 2-րդ դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճանների:

10) տրամադրում է արձակուրդ Դեպարտամենտի կենտրոնական մարմնի աշխատողներին և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին:

11) Դատարանների նախագահների խորհրդի հաստատմանն է ներկայացնում դատական ծառայության պաշտոնների անձնագրերի նկարագրերը, հիշյալ պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը:

12) դատական ծառայողների անվանացանկը հաստատվելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատում (փոփոխում) է Դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների հաստիքացուցակները:

13) որոշում է կայացնում դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթ անցկացնելու մասին, հայտարարում է փակ մրցույթներ:

14) օրենքով սահմանված կարգով դատական ծառայողների բնութագրերը ստանալուց հետո, բնութագրի և մասնավոր կարծիքի հիման վրա, կայացնում է համապատասխան որոշում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դատական ծառայողների աշխատանքի գնահատման, մասնավորապես՝ նրանց նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ:

15) Դատարանների նախագահների խորհրդի նախագահին ներկայացնում է հաղորդումներ նրա կողմից նշանակված դատական ծառայողների կողմից թույլ տված կարգապահական և վարքագծի կանոնների խախտումների մասին:

16) իրականացնում է Դեպարտամենտի ընթացիկ գործունեության վերահսկողությունը:

17) ներկայացնում է Դեպարտամենտի գործունեության հաշվետվությունները:

18) քննարկում է Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների գործունեության ստուգման արդյունքները:

19) պարբերաբար վերլուծում է Դեպարտամենտի գործունեությունը, բացահայտում հրատապ հարցերը, գնահատում կարիքները և դրանց հիման վրա մշակում համապատասխան առաջարկություններ:

20) պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է իր իրավասությունը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր:

21) կազմավորում է աշխատանքային խմբեր:

22) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն:

23) իրականացնում է Դեպարտամենտի գործունեությանն առնչվող՝ Արցախի Հանրապետության օրենքներով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

27. Դեպարտամենտի ղեկավարի բացակայության դեպքում Դատարանների նախագահների խորհրդի նախագահի հրամանով Դեպարտամենտի ղեկավարին փոխարինում է Դեպարտամենտի ղեկավարի տեղակալը կամ այլ դատական ծառայող:

28. Դեպարտամենտի ղեկավարն ունի տեղակալ, որը գործում է նրա անմիջական ղեկավարությամբ և իրականացնում է համապատասխան ոլորտներում աշխատանքների ղեկավարումը, կազմակերպումը և համակարգումը, կատարում Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությունները:

29. Դեպարտամենտի ղեկավարի տեղակալը դատական ծառայող է, ով պաշտոնի նշանակվում և ազատվում է «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն անցկացվող մրցույթի արդյունքում Դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ՝ Դատարանների նախագահների խորհրդի նախագահի կողմից:

30. Դեպարտամենտի ղեկավարի տեղակալն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) Դեպարտամենտի կառուցվածքին համապատասխան ղեկավարում, կազմակերպում և համակարգում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը.

2) ստորաբաժանումների ղեկավարներին տալիս է համապատասխան հանձնարարականներ.

3) Դեպարտամենտի կառուցվածքին համապատասխան՝ ներկայացնում է կառուցվածքային ստորաբաժանումներն այլ մարմինների հետ հարաբերություններում.

4) կատարում է Դատարանների նախագահների խորհրդի նախագահի և Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարականները.

5) հսկողություն է իրականացնում ստորաբաժանումների ղեկավարների կողմից աշխատանքային կարգապահության և վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ.

6) վերահսկում է Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի, Դատարանների նախագահների խորհրդի և Դեպարտամենտի ղեկավարի՝ դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերվող իրավական ակտերի պահանջների կատարումը, այդ նպատակով իրականացնում է վերահսկողական այցեր.

7) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ և կրում պարտականություններ:

31. Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ ղեկավարի տեղակալը կամ կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից որևէ դատական ծառայող կատարում է նաև հետևյալ գործառնությունները.

1) աջակցում է Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի աշխատանքների իրականացմանը, հանդես է գալիս որպես քարտուղար.

2) կատարում է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգային որոշումները, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի այն անդամի հանձնարարությունները, որին Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ տրվել են հանձնարարություններ.

3) նախապատրաստում է Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի նիստերը.

4) Բարձրագույն դատական խորհրդին և Դատարանների նախագահների խորհրդին է ներկայացնում օրենքով սահմանված կարգով մինչև խորհրդի նիստը բերված միջնորդությունները և այլ փաստաթղթերը.

5) Բարձրագույն դատական խորհրդի հանձնարարությամբ նախապատրաստում և տրամադրում է անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն.

6) Բարձրագույն դատական խորհրդի անդամներին և շահագրգիռ անձանց է տրամադրում Բարձրագույն դատական խորհրդում քննվող հարցերի վերաբերյալ նյութերը.

7) արձանագրում է Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի նիստերը, առաքում և հրապարակում է ընդունված ակտերը:

V. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

32. Դեպարտամենտի կենտրոնական մարմինը՝

1) իրականացնում է Դեպարտամենտին վերապահված գործառնությունները՝ բացառությամբ առանձնացված ստորաբաժանումներին վերապահվածների.

2) իրականացնում է կադրային քաղաքականությունը, ֆինանսական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումներ՝ ուղղված դատական իշխանության արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծմանը.

3) նախապատրաստում է Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի նիստերը.

4) նախապատրաստում է Դատավորների ընդհանուր ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի որոշումների և իրավական այլ ակտերի նախագծերը.

5) վերլուծում և ամփոփում է դատական պրակտիկան և դատական վիճակագրությունը.

6) վարում է դատավորների անձնական գործերը.

7) կազմակերպում է Արցախի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի աշխատանքը.

8) առանձնացված ստորաբաժանումների ներկայացրած հայտերի հիման վրա իրականացնում է դատական իշխանության բյուջետային գործընթացը.

9) կազմակերպում է արխիվային գործի վարումը.

10) ապահովում է Դեպարտամենտի մասնակցությունը միջազգային հարաբերություններում.

11) ապահովում է գործավարության միասնականությունը Դատարաններում և Դեպարտամենտում.

12) տնօրինում է Դեպարտամենտի գործունեության արդյունքում ձևավորված տեղեկատվությունը.

13) օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված կարգով ապահովում է տեղեկատվության տրամադրումը հասարակությանը.

14) համակարգում է Դեպարտամենտի կարիքների համար պետական գնումների իրականացումը.

15) իրականացնում է օրենքով, Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի որոշումներով իրեն վերապահված այլ գործառնություններ:

33. Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝

1) իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում են ստորաբաժանման անմիջական ղեկավարումը, կատարում են ծառայողների միջև աշխատանքի բաշխումը, ապահովում են աշխատանքային կարգապահությունը և պատասխանատվություն են կրում ստորաբաժանման գործառնությունների իրականացման և աշխատանքների կատարման համար.

2) կատարում են Դեպարտամենտի ղեկավարի և տեղակալի հանձնարարությունները, մասնակցում են նրանց մոտ անցկացվող խորհրդակցություններին, հանդիպումներին, այցերին, բանակցություններին.

3) ստորաբաժանման գործառնություններն ապահովելու, ինչպես նաև իրենց առջև դրված խնդիրների իրականացման նպատակով կատարում են ուսումնասիրություններ, հրավիրում են խորհրդակցություններ.

4) զեկուցումներ են ներկայացնում իրենց կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանումներին առնչվող համապատասխան աշխատակիցների կողմից կատարվող աշխատանքների ընթացքի մասին.

5) հսկողություն են իրականացնում իրենց ղեկավարած ստորաբաժանումների ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության և վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ.

6) իրականացնում են սույն կանոնադրությամբ, իրավական այլ ակտերով իրենց կողմից ղեկավարվող ստորաբաժանմանը վերապահված գործառնություններից բխող այլ լիազորություններ:

34. Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործառնություններն իրականացնում են օրենքների և իրավական այլ ակտերի պահանջների պահպանմամբ և միմյանց հետ համագործակցելով:

35. Դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության բաժինը իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) նախնական հետազոտությունների արդյունքում ներկայացնում է դատական պրակտիկայի ամփոփման արդիական թեմաներ.

2) աշխատանքային գործունեության ծրագրի համաձայն կամ դատական ակտերի հիման վրա հետազոտում և ամփոփում է Դատարանների կողմից նյութական և դատավարական օրենսդրության նորմերի կիրառման պրակտիկան.

3) քննարկում է քաղաքացիների և այլ անձանց դիմումները կապված դատական պրակտիկայում առկա հակասությունների հետ և անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ.

4) իրականացնում է Արցախի Հանրապետության դատական վիճակագրության հավաքագրումը, վարումն ու ամփոփումը.

5) կազմում է Դատարաններում գործերի քննության վիճակագրական վերլուծական տեսությունը.

6) քննարկում է անձանց դիմումները՝ կապված դատական վիճակագրության տվյալների հետ.

7) իրականացնում է դատավորների գործունեության գնահատման քանակական չափանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրումը.

8) իրականացնում է իր լիազորություններից բխող այլ գործառնություններ:

36. Անձնակազմի կառավարման և կազմակերպման բաժինն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) վարում է դատավորների, դատական ծառայողների և կենտրոնական մարմնում տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների անձնական գործերը.

2) վարում է գաղտնի գործավարությունը.

3) նախապատրաստում և հաշվառում է Դեպարտամենտի կողմից ընդունվող հրամաններն ու այլ իրավական ակտերը.

4) տալիս է տեղեկանքներ դատական ծառայության թափուր պաշտոնների մասին, դատական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.

5) ապահովում է դատական ծառայության թափուր պաշտոնի համար մրցությունների անցկացումը.

6) ընդունում է դատական ծառայության պաշտոնների համար հայտարարված մրցությունների հայտերը, եզրակացություն է տալիս մրցույթի մասնակցի՝ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.

7) վարում է դատավորների, դատական ծառայողների զենքի հաշվառումը.

8) իրականացնում է դատական ծառայողների կողմից կատարված խախտումների ծառայողական քննություն.

9) ամփոփում է ծառայողների գործունեության գնահատման արդյունքները, դրանց հիման վրա կազմում առաջարկություններ անձնակազմի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ.

10) կազմակերպում և կազմում է Դատարանների նախագահների խորհրդի որոշումների նախագծերն ու վերջնական տարբերակները.

11) ապահովում է Դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի և Դատարանների նախագահների խորհրդի, նիստերի նախապատրաստական և կազմակերպական աշխատանքները.

12) վարում է Արցախի Հանրապետության օրենքների, ենթօրենսդրական ակտերի շտեմարանը, Արցախի Հանրապետության օրենքների, Արցախի Հանրապետության օրենսգրքերի ժամանակագրական օրինակները.

13) կազմում է քաղաքացիների դիմումների պատասխան-գրությունների նախագծերը.

14) նախապատրաստում է դատական համակարգի, Դեպարտամենտի արտաքին կապերին վերաբերվող ծրագրային փաստաթղթեր.

15) կազմակերպում է աշխատանքը միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների ներկայացուցիչների հետ.

16) համակարգում է արտաքին ոլորտին վերաբերող, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված աշխատանքները.

17) ապահովում է օտարերկրյա դատական մարմինների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ Արցախի Հանրապետության դատական իշխանության համագործակցությունը.

18) հավաքում, մշակում և վերլուծում է օտարերկրյա պետություններում իրավական գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը և դրա հիման վրա ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

19) պատրաստում է անհրաժեշտ տեղեկատվություն դատական իշխանության ներկայացուցիչների, դատական ծառայողների արտասահմանյան այցերի, ինչպես նաև օտարերկրյա պաշտոնատար անձանց և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների մասին.

20) ապահովում է Արցախի Հանրապետության դատական իշխանության ներկայացուցչությունն արտաքին հարաբերություններում և կազմակերպում է Արցախի Հանրապետության դատական իշխանության ներկայացուցիչների արտասահմանյան այցերի հետ կապված աշխատանքները.

21) ամփոփում է դատական համակարգի ներկայացուցիչների միջազգային հանդիպումների և այցերի հետ կապված աշխատանքների արդյունքները, ներկայացնում առաջարկություններ.

22) կազմակերպում է արարողակարգային միջոցառումներ.

23) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված իր լիազորություններից բխող այլ գործառնություններ:

37. Ֆինանսատնտեսական բաժինն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) ապահովում է Դեպարտամենտի կապը Արցախի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ.

2) միջոցներ է ձեռնարկում Դեպարտամենտին հատկացված դրամական միջոցների արդյունավետ օգտագործման ուղղությամբ.

3) մշակում է Արցախի Հանրապետության դատական համակարգի միջնաժամկետ ծախսային ծրագիրը և առաջիկա տարվա բյուջետային հայտը.

4) իրականացնում է բյուջեի կատարողականի վերլուծություն.

5) ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունների հիման վրա պատրաստում է ֆինանսավորման հայտերը.

6) անհրաժեշտության դեպքում առաջարկ է ներկայացնում Դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու մասին.

7) կազմում է Դեպարտամենտի կենտրոնական մարմնին և առանձնացված ստորաբաժանումներին հատկացված բյուջետային միջոցների համամասնական բաշխման նախագիծը.

8) ապահովում է ֆինանսադրամարկային և բյուջետային կարգապահությունը.

9) տալիս է եզրակացություն դատական համակարգի պահուստային ֆոնդի միջոցները տնօրինելու վերաբերյալ.

10) ապահովում և իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով բյուջետային գործընթացն ու ֆինանսավորումը կարգավորող այլ գործառնություններ.

11) վարում է Դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների հաշվապահական հաշվառումը.

12) իրականացնում է Դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների հաշվապահական հաշվետվությունների հաշվառում և վերլուծություն, դրա հիման վրա ձևակերպում է ֆինանսական պարտավորությունները.

13) կազմում է Դեպարտամենտի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները.

14) սահմանված կարգով հաշվառում է դրամական միջոցները, նյութական արժեքները, գույքագրում դրանց հետագա շարժի հետ կապված գործառնությունները.

15) կազմում է Դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների պահպանման ծախսերի նախահաշիվները, կատարում է համապատասխան վերլուծություններ.

16) կազմում է Դեպարտամենտի պահպանման ծախսերի ամփոփ նախահաշիվները.

17) իրականացնում է ֆինանսատնտեսական բաժնին վերապահված հաշվապահական հաշվառումից բխող այլ գործառնություններ:

38. Արցախի Հանրապետության դատարանների արխիվը՝

1) իրականացնում է արխիվ հանձնված գործերի, կայացված վճիռների, դատավճիռների, որոշումների և այլ փաստաթղթերի հաշվառում.

2) օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է արխիվ մուտքագրվող փաստաթղթերի պլանավորված համալրում և օգտագործում.

3) սահմանված կարգով մշակում է արխիվային նյութերը.

4) ընդունում է արխիվային գործերը և պատասխանատվություն կրում դրանց պահպանման համար.

5) տրամադրում է արխիվում առկա տեղեկատվությունը տեղեկատվություն հայցող անձանց.

6) հսկողություն է իրականացնում Դատարանների արխիվներում «Արխիվային գործի մասին» ԼՂՀ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված փաստաթղթերի ժամանակավոր պահպանման ժամկետների նկատմամբ.

7) վարում է պետական տուրքի հաշվառում.

8) իր խնդիրներն ու գործառնություններն իրականացնելու նպատակով համագործակցում է արխիվների հետ.

9) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառնություններ:

39. Համակարգչային սպասարկման ծառայությունն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) վերլուծում, գնահատում և ներկայացնում է Դեպարտամենտի ղեկավարին ոլորտում առկա պրոբլեմները և նրանց լուծման հնարավոր ուղիները.

2) իրականացնում է դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի տեխնիկական սպասարկումը և անվտանգության ապահովումը.

3) իրականացնում է Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում նոր սարքավորումների և ծրագրային միջոցների փորձարկման, կարգաբերման և ներդրման աշխատանքները.

4) մշակում, ներդնում և վերահսկում է Դեպարտամենտի լոկալ համակարգչային ցանցի, ծրագրերի, ապարատային միջոցների, ցանցային օպերացիոն համակարգերի վերաբերյալ ստրատեգիաներ.

5) իրականացնում է Արցախի Հանրապետության դատական համակարգի աշխատողների՝ կառավարման ժամանակակից տեխնիկական միջոցների և հաղորդակցման էլեկտրոնային միջոցների շահագործման ձևերի և կանոնների ուսուցման աշխատանքները.

6) իրականացնում է հակավիրուսային համակարգերի ներդրման, թարմացման և ցանցի անվտանգ մուտք դեպի ինտերնետ ապահովման աշխատանքները.

7) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ գործառնություններ:

**VI. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՈՒՅՔԸ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

40. Դեպարտամենտի գույքը ձևավորվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

41. Դեպարտամենտն իրավունք ունի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով իր գործունեության նպատակներին և գույքի նշանակության համապատասխան օգտագործել, տիրապետել և տնօրինել իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

42. Դեպարտամենտի պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցներից: Դեպարտամենտը կարող է նաև ֆինանսավորվել օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներից:

43. Դեպարտամենտն իր ֆինանսական գործառնություններն ու իր կարիքների համար գնումները կատարում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

44. Դեպարտամենտի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ԼՂՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կողմից:

**VII. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐՈՒՄԸ**

45. Դեպարտամենտի վերակազմակերպումը և գործունեության դադարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ց Ք
«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ»
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

I. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Բաժիններ
1.1 Դատական պրակտիկային ամփոփման և վիճակագրության բաժին
1.2 Անձնակազմի կառավարման և կազմակերպման բաժին
1.3 Ֆինանսատնտեսական բաժին
2. Համակարգչային սպասարկման ծառայություն
3. Արցախի Հանրապետության դատարանների արխիվ

II. ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի աշխատակազմ
2. Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի աշխատակազմ
3. Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմ
4. Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայություն

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում է, որն իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և իրավական այլ ակտերով Արցախի Հանրապետության Գերագույն դատարանին (այսուհետ՝ Դատարան) վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

2. Աշխատակազմն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է Դատարանի լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելուն:

3. Աշխատակազմի իրավական վիճակն ու գործունեության կարգը սահմանվում է Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով և այլ իրավական ակտերով:

4. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

5. Աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք: Աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի կողմից հաստատված ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

6. Աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի աշխատակազմ» Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում:

7. Աշխատակազմի գտնվելու վայրն է Արցախի Հանրապետություն, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42:

II. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Աշխատակազմն իր խնդիրների իրականացման համար կառուցվածքային ստորաբաժանման և պաշտոնատար անձանց միջոցով իրականացնում է հետևյալ գործառնությունները.

1) ապահովում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Դեպարտամենտի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ Դատարանին վերապահված լիազորությունների լիարժեք և

արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը.

2) սահմանված կարգով վարում է տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների անձնական գործերը.

3) տնօրինում է Դատարանի, Աշխատակազմի գործունեության արդյունքում ձևավորված տեղեկատվությունը.

4) օժանդակում է դատական պրակտիկայի ամփոփման աշխատանքներին, վարում դատական վիճակագրություն.

5) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

III. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Աշխատակազմը կառավարում են հիմնադիրը և Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի նախագահը՝ օրենքով և իրավական այլ ակտերով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում:

10. Աշխատակազմի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Դատարանի նախագահը, իսկ դատական ծառայության իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Դեպարտամենտի ղեկավարը:

11. Աշխատակազմի անմիջական ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի ղեկավարը:

12. Աշխատակազմի ղեկավարը՝

1) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Դեպարտամենտի անունից, ներկայացնում նրա շահերը.

2) Աշխատակազմի առանձին գործառույթներն իրականացնելու համար տալիս է լիազորագրեր.

3) ներկայացնում է Աշխատակազմն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

4) ապահովում է Աշխատակազմի բնականոն գործունեությունը.

5) Դատարանի նախագահին և Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ Աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, մասնավորապես՝ աշխատանքային ծրագրերի մասին.

6) պարբերաբար ուսումնասիրում է Աշխատակազմի գործունեությունը, բացահայտում հիմնախնդիրները, գնահատում կարիքները, դրանց հիման վրա մշակում համապատասխան առաջարկություններ և ներկայացնում Դատարանի նախագահին ու Դեպարտամենտի ղեկավարին.

7) ղեկավարում է Աշխատակազմի աշխատանքները.

8) իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկում և ստուգում դրանց կատարումը.

9) Աշխատակազմի անունից ներկայացնում է հաշվետվություններ.

10) Դեպարտամենտի կենտրոնական մարմին է ներկայացնում Աշխատակազմի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները.

11) ապահովում է Աշխատակազմում դատական ծառայության արդյունավետ իրականացումը.

12) Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն տրամադրում է արձակուրդ Աշխատակազմի դատական ծառայության պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց.

13) սահմանված կարգով նշանակում և ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկումն իրականացնող աշխատակիցներին.

14) ապահովում է Աշխատակազմի օգտագործմանը հանձնված գույքի արդյունավետ շահագործումը.

15) Դեպարտամենտի կենտրոնական մարմնին ներկայացնում է բյուջետային հայտ.

16) Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնում է հաղորդումներ Աշխատակազմի դատական ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական, վարքագծի կանոնների խախտումների մասին.

17) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով դատական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում հաղորդում է ուղարկում Դեպարտամենտի ղեկավարին.

18) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ և պարտականություններ:

13. Աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է պաշտոնի անձնագրով նման լիազորություն ունեցող դատական ծառայողը:

IV. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՑՅՈՒՆԸ

14. Գրասենյակն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝

1) ստանում է Դատարան ներկայացվող բոլոր փաստաթղթերը և դատական գործերը.

2) ապահովում է փաստաթղթերի և գործերի գրանցումները, հանձնում հասցեատերերին.

3) ստանում է Դատարանից առաքվող բոլոր փաստաթղթերը և դատական գործերը, գրանցում ու առաքում դրանք.

4) ապահովում է Դատարանում գործավարության իրականացումը.

5) ապահովում է փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը.

6) պահպանում է փաստաթղթերը, գրասենյակում վարվող մատյանները և սահմանված կարգով ներկայացնում արխիվացման.

7) վարում է պետական տուրքի հաշվառում.

8) կազմում է վիճակագրական հաշվետվություններ.

9) կրում է պատասխանատվություն գործավարության իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության ամբողջականության, հավաստիության և ճշգրտության համար:

15. Աշխատակազմն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Դեպարտամենտի կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով, Դատարանի նախագահի հրամաններով և այլ իրավական ակտերով Աշխատակազմին վերապահված այլ գործառույթներ:

V. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

16. Աշխատակազմն իրավունք ունի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործել իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

17. Աշխատակազմի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կողմից:

**VI. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

18. Աշխատակազմի վերակազմակերպումը և գործունեության դադարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 4
Արցախի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2017թ. դեկտեմբերի 1-ի թիվ 15-Ն որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ**

ԿԱՌԱՎԱՐՉՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

Գրասենյակ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում է, որն իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և իրավական այլ ակտերով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանին (այսուհետ՝ Դատարան) վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

2. Աշխատակազմն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է Դատարանի լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելուն:

3. Աշխատակազմի իրավական վիճակն ու գործունեության կարգը սահմանվում է Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով և այլ իրավական ակտերով:

4. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

5. Աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք: Աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի կողմից հաստատված ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

6. Աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի աշխատակազմ «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում»:

7. Աշխատակազմի գտնվելու վայրն է Արցախի Հանրապետություն, ք.Ստեփանակերտ, Դավիթ Բեկ 40:

II. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

8. Աշխատակազմն իր խնդիրների իրականացման համար կառուցվածքային ստորաբաժանման և պաշտոնատար անձանց միջոցով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) ապահովում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Դեպարտամենտի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ Դատարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը.

2) սահմանված կարգով վարում է տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների անձնական գործերը.

3) տնօրինում է Դատարանի, Աշխատակազմի գործունեության արդյունքում ձևավորված տեղեկատվությունը.

4) օժանդակում է դատական պրակտիկայի ամփոփման աշխատանքներին, վարում դատական վիճակագրություն.

5) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

III. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Աշխատակազմը կառավարում են հիմնադիրը և Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի նախագահը՝ օրենքով և իրավական այլ ակտերով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում:

10. Աշխատակազմի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Դատարանի նախագահը, իսկ դատական ծառայության իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Դեպարտամենտի ղեկավարը:

11. Աշխատակազմի անմիջական ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի ղեկավարը:

12. Աշխատակազմի ղեկավարը՝

1) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Դեպարտամենտի անունից, ներկայացնում նրա շահերը.

2) Աշխատակազմի առանձին գործառույթներն իրականացնելու համար տալիս է լիազորագրեր.

3) ներկայացնում է Աշխատակազմն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

4) ապահովում է Աշխատակազմի բնականոն գործունեությունը.

5) Դատարանի նախագահին և Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ Աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, մասնավորապես՝ աշխատանքային ծրագրերի մասին.

6) պարբերաբար ուսումնասիրում է Աշխատակազմի գործունեությունը, բացահայտում հիմնախնդիրները, գնահատում կարիքները, դրանց հիման վրա մշակում համապատասխան առաջարկություններ և ներկայացնում Դատարանի նախագահին ու Դեպարտամենտի ղեկավարին.

7) ղեկավարում է Աշխատակազմի աշխատանքները.

8) իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկում և ստուգում դրանց կատարումը.

9) Աշխատակազմի անունից ներկայացնում է հաշվետվություններ.

10) Դեպարտամենտի կենտրոնական մարմին է ներկայացնում Աշխատակազմի տարեկան հաշվետվությունները.

11) ապահովում է Աշխատակազմում դատական ծառայության արդյունավետ իրականացումը.

12) Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն տրամադրում է արձակուրդ Աշխատակազմի դատական ծառայության պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց.

13) սահմանված կարգով նշանակում և ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկումն իրականացնող աշխատակիցներին.

14) ապահովում է Աշխատակազմի օգտագործմանը հանձնված գույքի արդյունավետ շահագործումը.

15) Դեպարտամենտի կենտրոնական մարմնին ներկայացնում է բյուջետային հայտ.

16) Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնում է հաղորդումներ Աշխատակազմի դատական ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական, վարքագծի կանոնների խախտումների մասին.

17) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով դատական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում հաղորդում է ուղարկում Դեպարտամենտի ղեկավարին.

18) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ և պարտականություններ:

13. Աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է պաշտոնի անձնագրով նման լիազորություն ունեցող դատական ծառայողը:

IV. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

14. Գրասենյակն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով`

1) ստանում է Դատարան ներկայացվող բոլոր փաստաթղթերը և դատական գործերը.

2) ապահովում է փաստաթղթերի և գործերի գրանցումները, հանձնում հասցեատերերին.

3) ստանում է Դատարանից առաքվող բոլոր փաստաթղթերը և դատական գործերը, գրանցում ու առաքում դրանք.

4) ապահովում է Դատարանում գործավարության իրականացումը.

5) ապահովում է փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը.

6) պահպանում է փաստաթղթերը, գրասենյակում վարվող մատյանները և սահմանված կարգով ներկայացնում արխիվացման.

7) վարում է պետական տուրքի հաշվառում.

8) կազմում է վիճակագրական հաշվետվություններ.

9) կրում է պատասխանատվություն գործավարության իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության ամբողջականության, հավաստիության և ճշգրտության համար:

15. Աշխատակազմն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Դեպարտամենտի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով, Դատարանի նախագահի հրամաններով և այլ իրավական ակտերով Աշխատակազմին վերապահված այլ գործառնություններ:

V. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

16. Աշխատակազմն իրավունք ունի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակության համապատասխան, օգտագործել իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

17. Աշխատակազմի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կողմից:

**VI. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

18. Աշխատակազմի վերակազմակերպումը և գործունեության դադարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 6
Արցախի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2017թ. դեկտեմբերի 1-ի թիվ 15-Ն որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

Գրասենյակ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում է, որն իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և իրավական այլ ակտերով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին (այսուհետ՝ Դատարան) վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

2. Աշխատակազմն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է Դատարանի լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելուն:

3. Աշխատակազմի իրավական վիճակն ու գործունեության կարգը սահմանվում է Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով և այլ իրավական ակտերով:

4. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

5. Աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք: Աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի կողմից հաստատված ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

6. Աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմ» Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում:

7. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42:

II. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՂԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

8. Աշխատակազմն իր խնդիրների իրականացման համար կառուցվածքային ստորաբաժանման և պաշտոնատար անձանց միջոցով իրականացնում է հետևյալ գործառնությունները.

1) ապահովում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Դեպարտամենտի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ Դատարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը.

2) սահմանված կարգով վարում է տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների անձնական գործերը.

3) տնօրինում է Դատարանի, Աշխատակազմի գործունեության արդյունքում ձևավորված տեղեկատվությունը.

4) օժանդակում է դատական պրակտիկայի ամփոփման աշխատանքներին, վարում դատական վիճակագրություն.

5) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ գործառնություններ:

III. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Աշխատակազմը կառավարում են հիմնադիրը և Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի նախագահը՝ օրենքով և իրավական այլ ակտերով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում:

10. Աշխատակազմի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Դատարանի նախագահը, իսկ դատական ծառայության իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Դեպարտամենտի ղեկավարը:

11. Աշխատակազմի անմիջական ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի ղեկավարը:

12. Աշխատակազմի ղեկավարը՝

1) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Դեպարտամենտի անունից, ներկայացնում նրա շահերը.

2) Աշխատակազմի առանձին գործառնություններն իրականացնելու համար տալիս է լիազորագրեր.

3) ներկայացնում է Աշխատակազմն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

4) ապահովում է Աշխատակազմի բնականոն գործունեությունը.

5) Դատարանի նախագահին և Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ Աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, մասնավորապես՝ աշխատանքային ծրագրերի մասին.

6) պարբերաբար ուսումնասիրում է Աշխատակազմի գործունեությունը, բացահայտում հիմնախնդիրները, գնահատում կարիքները, դրանց հիման վրա մշակում համապատասխան առաջարկություններ և ներկայացնում Դատարանի նախագահին ու Դեպարտամենտի ղեկավարին.

7) ղեկավարում է Աշխատակազմի աշխատանքները.

8) իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկում և ստուգում դրանց կատարումը.

9) Աշխատակազմի անունից ներկայացնում է հաշվետվություններ.

10) Դեպարտամենտի կենտրոնական մարմին է ներկայացնում Աշխատակազմի տարեկան հաշվետվությունները.

11) ապահովում է Աշխատակազմում դատական ծառայության արդյունավետ իրականացումը.

12) Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն տրամադրում է արձակուրդ Աշխատակազմի դատական ծառայության պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց.

13) սահմանված կարգով նշանակում և ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկումն իրականացնող աշխատակիցներին.

14) ապահովում է Աշխատակազմի օգտագործմանը հանձնված գույքի արդյունավետ շահագործումը.

15) Դեպարտամենտի կենտրոնական մարմնին ներկայացնում է բյուջետային հայտ.

16) Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնում է հաղորդումներ Աշխատակազմի դատական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի կողմից թույլ տրված կարգապահական, վարքագծի կանոնների խախտումների մասին.

17) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով դատական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում հաղորդում է ուղարկում Դեպարտամենտի ղեկավարին.

18) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ և պարտականություններ:

13. Աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է պաշտոնի անձնագրով նման լիազորություն ունեցող դատական ծառայողը:

IV. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Գրասենյակն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝

1) ստանում է Դատարան ներկայացվող բոլոր փաստաթղթերը և դատական գործերը.

2) ապահովում է փաստաթղթերի և գործերի գրանցումները, հանձնում հասցեատերերին.

3) ստանում է Դատարանից առաքվող բոլոր փաստաթղթերը և դատական գործերը, գրանցում ու առաքում դրանք.

4) ապահովում է Դատարանում գործավարության իրականացումը.

5) ապահովում է փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը.

6) պահպանում է փաստաթղթերը, գրասենյակում վարվող մատյանները և սահմանված կարգով ներկայացնում արխիվացման.

7) վարում է պետական տուրքի հաշվառում.

8) կազմում է վիճակագրական հաշվետվություններ.

9) կրում է պատասխանատվություն գործավարության իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության ամբողջականության, հավաստիության և ճշգրտության համար:

15. Աշխատակազմն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Դեպարտամենտի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով, Դատարանի նախագահի հրամաններով և այլ իրավական ակտերով Աշխատակազմին վերապահված այլ գործառնություններ:

V. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

16. Աշխատակազմն իրավունք ունի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործել իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

17. Աշխատակազմի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կողմից:

**VI. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

18. Աշխատակազմի վերակազմակերպումը և գործունեության դադարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 8
Արցախի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2017թ. դեկտեմբերի 1-ի թիվ 15-Ն որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

**«ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՑՑԱՆԻ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ «ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ԱՌԱՋԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

Գրասենյակ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ»
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԿԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն) «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Դեպարտամենտ) առանձնացված ստորաբաժանում է, որն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, դատական օրենսգրքով, միջազգային պայմանագրերով, օրենքներով և իրավական այլ ակտերով Արցախի Հանրապետության դատարաններում, Դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում սահմանված կարգի պահպանումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը:

2. Ծառայությունն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է Արցախի Հանրապետության դատարանների լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունն ապահովելուն:

3. Ծառայության իրավական կարգավիճակն ու գործունեության կարգը սահմանվում է Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով, օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

4. Ծառայությունը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Ծառայության կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

5. Ծառայությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և Դեպարտամենտի ու իր հայերեն անվանմամբ կլոր կնիք: Ծառայությունն ունի Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի կողմից հաստատված ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

6. Ծառայության անվանումն է՝ «Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայություն» Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում:

7. Ծառայության գտնվելու վայրն է Արցախի Հանրապետություն, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԵՐԸ

8. Արցախի Հանրապետության դատական օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայության խնդիրներն են ապահովել՝

1) դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների, դատական ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության,

իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից.

2) տեղում անմիջական կատարման ենթակա դատարանի կարգադրությունների կատարումը.

3) Դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը, գույքի, ինչպես նաև շենքի և դրա սպասարկման տարածքի պահպանությունը:

9. Ծառայությունն իր խնդիրներն իրականացնելու նպատակով համագործակցում է Արցախի Հանրապետության ոստիկանության և պետական այլ մարմինների հետ՝ տեղեկատվություն փոխանակելով, համատեղ գործողություններ կազմակերպելով և իրականացնելով, ինչպես նաև ծառայությունն իրականացնելիս միմյանց անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելով:

10. Ծառայության գործառույթներն են՝

1) ապահովել դատարաններում դատավորների, դատավարության մասնակիցների, դատական ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և դատարանների տարածքի պահպանումը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից.

2) ապահովել դատական նիստի ժամանակ նիստը նախագահողի կամ դատավորի՝ դատական նիստի բնականոն ընթացքի և հասարակական կարգի պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված կարգադրությունների կատարումը.

3) ապահովել Դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը, գույքի, ինչպես նաև շենքի և սպասարկման տարածքի պահպանությունը.

4) ստուգել դատական նիստերի դահլիճի պատրաստությունը դատական նիստին, ապահովել դատավորի հանձնարարությամբ քրեական գործը և իրեղեն ապացույցները դատական քննության վայր հասցնելը և դրանց պահպանումը.

5) խափանել հանցագործությունների և իրավախախտումների կատարումը դատարանում, ի հայտ եկած իրավախախտումներին անհրաժեշտության դեպքում վերցնել արգելանքի՝ ապահովելով նրանց անհապաղ հանձնումը ոստիկանություն:

III. ԾԱՌԱՅՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

11. Ծառայության գործունեության համակարգումն ու ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է Դեպարտամենտի ղեկավարը՝ օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

12. Ծառայության ղեկավարումն ու հսկողությունն իրականացնում է դատական կարգադրիչների ծառայության պետը: Դատական կարգադրիչների ծառայության պետը՝

1) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Դեպարտամենտի անունից, ներկայացնում նրա շահերը.

2) ներկայացնում է Ծառայությունն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

3) ապահովում է Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի, այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, Բարձրագույն դատական խորհրդի, Դատարանների նախագահների խորհրդի որոշումների, ինչպես նաև Դեպարտամենտի ղեկավարի հրամանների և կարգադրությունների կատարումը.

- 4) Դեպարտամենտի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ Ծառայության գործունեության հիմնական ուղղությունների, մասնավորապես՝ աշխատանքային ծրագրերի մասին.
 - 5) առաջարկություն է ներկայացնում Դեպարտամենտի ղեկավարին՝ ծառայության կառուցվածքի և հաստիքների քանակի վերաբերյալ.
 - 6) ներկայացնում է ծառայողների մասնագիտական և հատուկ ուսուցման հայտը.
 - 7) Ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ.
 - 8) Դեպարտամենտի կենտրոնական մարմին է ներկայացնում Ծառայության տարեկան հաշվետվությունները.
 - 9) Դեպարտամենտի կենտրոնական մարմինն ներկայացնում է բյուջետային հայտ.
 - 10) ներկայացնում է առաջարկներ դատական կարգադրիչների ծառայության նյութատեխնիկական ապահովության վերաբերյալ.
 - 11) մշտապես ուսումնասիրում է Ծառայության գործունեությունը, բացահայտում հիմնախնդիրները, գնահատում կարիքները, դրանց հիման վրա մշակում համապատասխան առաջարկություններ և ներկայացնում Դեպարտամենտի ղեկավարին.
 - 12) ապահովում է Ծառայության բնականոն գործունեությունը և արդյունավետ իրականացումը.
 - 13) ղեկավարում և հսկողություն է իրականացնում դատական կարգադրիչների ծառայության գործունեության նկատմամբ.
 - 14) տալիս է դատական կարգադրիչների ծառայության կազմակերպմանն ուղղված ցուցումներ.
 - 15) իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ, վերահսկում և ստուգում դրանց կատարումը.
 - 16) Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն տրամադրում է արձակուրդ դատական կարգադրիչներին.
 - 17) ապահովում է Ծառայությանն օգտագործման հանձնված գույքի արդյունավետ շահագործումը.
 - 18) քննում է դատական կարգադրիչների նկատմամբ բերված բողոքները.
 - 19) վարում է դատական կարգադրիչների հատուկ միջոցների հաշվառումը.
 - 20) վարում է դատական կարգադրիչների անձնական գործերը.
 - 21) առաջարկություններ է ներկայացնում Դեպարտամենտի ղեկավարին դատական կարգադրիչների նյութատեխնիկական ապահովության մասին.
 - 22) առաջարկություն է ներկայացնում Դեպարտամենտի ղեկավարին դատական կարգադրիչների ծառայության ծառայողներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.
 - 23) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով դատական կարգադրիչի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հաղորդում է ուղարկում Դեպարտամենտի ղեկավարին.
 - 24) իրականացնում է Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով, օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ և պարտականություններ:
13. Ծառայության պետը պատասխանատվություն է կրում ծառայության առջև դրված խնդիրների իրականացման համար:
 14. Ծառայության պետի բացակայության դեպքում՝ Դեպարտամենտի ղեկավարի հրամանով, նրան փոխարինում է Ծառայության ավագ մասնագետը կամ Ծառայության ավագ դատական կարգադրիչներից մեկը:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

15. Ծառայության կառուցվածքը հաստատում և փոփոխում է Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը:

16. Ծառայության հաստիքների քանակը և պաշտոնների անվանացանկը հաստատում է Դատարանների նախագահների խորհուրդը՝ Դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ:

17. Ծառայության ավագ մասնագետը՝

1) ապահովում է դատարանների նախագահների, նիստը նախագահողի կամ դատավորի՝ դատարանում հասարակական կարգի պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված կարգադրությունների կատարումը.

2) կազմում է դատական կարգադրիչների հերթապահության ժամանակացույցը և ապահովում դրա կատարումը.

3) հսկողություն է իրականացնում դատական կարգադրիչներին հանձնված գույքի նպատակային օգտագործման նկատմամբ.

4) առաջարկություններ է ներկայացնում ծառայության պետին դատական կարգադրիչների նյութատեխնիկական ապահովության մասին.

5) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառնություններ:

18. Ծառայության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ծառայության ավագ դատական կարգադրիչներից մեկը:

19. Ծառայության ավագ դատական կարգադրիչը և դատական կարգադրիչը՝

1) ապահովում են դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների, դատական ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և դատարանի տարածքի պահպանումը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից.

2) ապահովում են դատական նիստի ժամանակ նիստը նախագահողի կամ դատավորի՝ դատական նիստի բնականոն ընթացքի և հասարակական կարգի պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված կարգադրությունների կատարումը.

3) ապահովում են Դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը, գույքի, ինչպես նաև շենքի և սպասարկման տարածքի պահպանությունը.

4) ստուգում է դատական նիստերի դահլիճի պատրաստությունը դատական նիստին, ապահովում է դատավորի հանձնարարությամբ քրեական գործը և իրեղեն ապացույցները դատական քննության վայր հասցնելը և դրանց պահպանումը.

5) խափանում է հանցագործությունների և իրավախախտումների կատարումը դատարանում, ի հայտ եկած իրավախախտներին անհրաժեշտության դեպքում վերցնում է արգելանքի՝ ապահովելով նրանց անհապաղ հանձնումը ոստիկանություն.

6) իր լիազորություններն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում համագործակցում է իրավասու այլ պետական մարմինների հետ.

7) իր գործառնություններն իրականացնելու նպատակով իրավունք ունի պարզելու դատարան մուտք գործող, դատական նիստերի դահլիճում գտնվող, ինչպես նաև դատական սանկցիայի ենթարկված անձի ինքնությունը.

8) իրավունք ունի դատարանի որոշման հիման վրա դատական նիստերի դահլիճից հեռացնելու անձին կամ սահմանափակելու այդ որոշման մեջ մատնանշված անձի մուտքը դատական նիստերի դահլիճ.

9) իրավունք ունի զննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը.

10) իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և պայմաններում կիրառելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ.

11) պարտավոր է իրեն վերապահված իրավունքներն իրականացնել օրենքին համապատասխան և իր գործունեության մեջ թույլ չտալ անձանց իրավունքների և օրինական շահերի խախտում:

20. Ծառայության դատական կարգադրիչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ծառայության ավագ դատական կարգադրիչներից մեկը:

21. Դատարանների նախագահների խորհրդի կողմից հաստատված «Դատական կարգադրիչների վարքագծի կանոնները» պարտադիր են Ծառայության բոլոր աշխատակիցների համար:

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

22. Ծառայությունն իրավունք ունի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործել իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

23. Ծառայության կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կողմից:

VI. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

24. Ծառայության վերակազմակերպումն ու գործունեության դադարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ 2190/02/16թ.
Քաղաքացիական գործ ԸԻԴ 2190/02/16թ.
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
 Ն.Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

17-ին նոյեմբերի 2017թ.

ԱՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

| | |
|----------------------------|----------------|
| նախագահությամբ՝ դատավոր | Ա.Հայրապետյանի |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Վ.Հովսեփյանի |
| | Գ.Արզումանյանի |
| | Ա.Աբրահամյանի |
| | Գ.Գրիգորյանի |

դրնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Նաիրա Մելսիկի
Թևոսյանի ընդդեմ <<Առաջաձորի Ա.Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց>>
ՊՈԱԿ տնօրեն Նելլի Սերգեյի Աթանեսյանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ի
թիվ 35 հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում
վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի
համար աշխատավարձի տարբերությունը գանձելու մասին քաղաքացիական
գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2017թ. օգոստոսի 31-ի որոշման դեմ
հայցվոր Նաիրա Թևոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

2016 թվականի սեպտեմբերի 26-ին դիմելով Արցախի
Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
/այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Մարտակերտի շրջանի
<<Առաջաձորի Ա.Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ
առևտրային կազմակերպության /այսուհետ՝ նաև Առաջաձորի միջնակարգ
դպրոց/ տնօրեն Նելլի Աթանեսյանի /այսուհետ՝ նաև Պատասխանող/ Նաիրա
Թևոսյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ խնդրել է իրեն վերականգնել նախկին՝
Առաջաձորի միջնակարգ դպրոցի դաստիարակչական աշխատանքների
կազմակերպչի /այսուհետ՝ նաև ԴԱԿ/ պաշտոնում:

2016 թվականի նոյեմբերի 9-ին Հայցվորը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ հայցի առարկան ու հիմքը փոփոխելու և լրացնելու մասին և որպես հայցի առարկա ներկայացրել Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն Նելլի Աթանեսյանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 35 հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատավարձերի տարբերությունը գանձելու մասին պահանջները: Որպես հայցի իրավական հիմք վկայակոչել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ հայցի հիմքն ու առարկան փոփոխելու և լրացնելու մասին Հայցվորի դիմումն ընդունվել է՝ սկզբնական հայցի հետ միաժամանակ քննելու նպատակով:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է «անվավեր ճանաչել Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրենի 2016թ. սեպտեմբերի 1-ի թիվ 35 հրամանի «ա» կետը՝ Նաիրա Թևոսյանին ԴԱԿ-ի պարտականություններից ազատման մասով: Նաիրա Թևոսյանի հայցն ընդդեմ Առաջաձորի միջնակարգ դպրոցի՝ ԴԱԿ-ի նախկին պաշտոնում վերականգնելու մասին, մերժել: Առաջաձորի միջնակարգ դպրոցից հոգուտ Նաիրա Թևոսյանի գանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի միջին աշխատավարձը՝ սկսած 2016թ. սեպտեմբերի 1-ից մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ միջին աշխատավարձի կրկնապատիկի չափով»:

Հայցվորի և Պատասխանողի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2017 թվականի մարտի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի 2016թ. դեկտեմբերի 26-ի վճիռը մասնակիորեն՝ նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատավարձերի տարբերության գումարների բռնագանձման և նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի կրկնապատիկի չափով փոխհատուցում տալու մասով, բեկանվել և գործն այդ մասով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Գործի նոր դատաքննության արդյունքում Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 4-ի վճռով հայցը բավարարվել է՝ վճռվել է Նաիրա Թևոսյանին վերականգնել Առաջաձորի միջնակարգ դպրոցի ԴԱԿ-ի պաշտոնում: Առաջաձորի միջնակարգ դպրոցից հոգուտ Նաիրա Թևոսյանի գանձվել է հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատավարձի տարբերությունը՝ սկսած 01.09.2016թ. մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Առաջաձորի միջնակարգ դպրոցից հոգուտ Արցախի Հանրապետության պետական բյուջեի գանձվել է 4.000 /չորս հազար/ ՀՀ դրամ և հարկադիր պարապուրդի ընթացքում բռնագանձման՝ ենթակա աշխատավարձի տարբերության գումարի երկու տոկոսը՝ որպես դատական ծախսի գումար:

Պատասխանողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2017թ. օգոստոսի 31-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը

բավարարվել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի 2017թ. հուլիսի 4-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է ու հայցը մասնակիորեն բավարարվել՝ որոշվել է բռնագանձել Առաջաձորի միջնակարգ դպրոցից հոգուտ Նաիրա Թևոյանի միջին աշխատավարձի հինապատիկի չափով /2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի հունիսի 1-ը/ գումար՝ որպես հատուցում աշխատանքում չվերականգնելու դիմաց:

Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն Նելլի Աթանեսյանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 35 հրամանի <<բ>> կետն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատավարձերի տարբերությունը գանձելու պահանջների մասին հայցապահանջը մերժվել է:

Բռնագանձվել է Առաջաձորի միջնակարգ դպրոցից հոգուտ Արցախի Հանրապետության բռնագանձման ենթակա ողջ գումարի երկու տոկոսը՝ որպես հայցադիմում և երեք տոկոսը՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարներ:

Սույն գործով 2017թ. հոկտեմբերի 2-ին վճռաբեկ բողոք է բերել Հայցվոր Նաիրա Թևոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Պատասխանողի ներկայացուցիչ Ա.Սադաթյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ, 229-րդ, 230-րդ, 230.2-րդ, 230.3-րդ, 230.4-րդ հոդվածների, ինչպես նաև ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ, 109-րդ հոդվածների, 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 115-րդ հոդվածի 2-րդ մասի, 265-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, որի արդյունքում թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն էլ ազդել է գործի ելքի վրա:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անհիմն եզրահանգել է, որ իբրև գործով ձեռք բերված ապացույցների համաձայն՝ ինքը Պատասխանողի հետ գտնվում է լարված հարաբերությունների մեջ, մինչդեռ գործի նյութերից նկատելի է, որ ինչպես Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրենի, այնպես էլ դպրոցի մյուս աշխատողների հետ ինքը գտնվում է նորմալ աշխատանքային հարաբերությունների մեջ, իսկ դատարանն դիմելու և Պատասխանողի հետ դատավարությամբ սահմանված կարգով վեճի մեջ մտնելը չի կարող վկայել կողմերի միջև լարված հարաբերությունների մասին: Չնայած դրան, Վերաքննիչ դատարանն անհիմն հաստատված է համարել Պատասխանողի և Հայցվորի՝ ԴԱԿ-ի պաշտոնում հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության փաստը:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, քանի որ նշված իրավանորմն իմպերատիվ լինելով, նախատեսում է միաժամանակյա երկու հատուցում աշխատանքում չվերականգնելու դիմաց. մեկը՝ պարապուրդի հատուցում,

մինչև վճիռն ուժի մեջ մտնելը, մյուսը՝ հատուցում՝ աշխատանքում վերականգնելն անհնարին լինելու համար:

Բողոքաբերը վկայակոչելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 57-րդ հոդվածի, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ, 113-րդ և 115-րդ հոդվածների պահանջները, գտնում է, որ ինքն անհիմն ազատվել է աշխատանքից, քանի որ գործատուն իր նախաձեռնությամբ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը կարող է լուծել միայն ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով:

Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2017թ. օգոստոսի 31-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին աստանի դատարանի 2017թ. հուլիսի 4-ի վճռին /սխալմամբ նշվել է 2016թ. դեկտեմբերի 26-ի վճռին/ կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Պատասխանողը և նրա ներկայացուցիչը վճռաբեկ բողոքի պատասխանում նշել են, որ բողոքաբերի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար, և որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը համահունչ է ԸԻԴ 0110/05/16թ. վարչական գործով 2017թ. հուլիսի 24-ի որոշմամբ Գերագույն դատարանի արտահայտած դիրքորոշումներին: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի 31.08.2017թ. որոշումը հիմնավոր է, կայացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Պողոսյանի 14.09.1991թ. թիվ 74 հրամանի համաձայն՝ Նաիրա Թևոսյանը՝ բարձրագույն կրթությամբ մաթեմատիկայի մասնագետ, նույն թվի սեպտեմբերի 1-ից նշանակվել է Առաջաձորի միջնակարգ դպրոցում, որպես ավագ պիոներ-ջոկատավար:

2. Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրենի 07.09.1999թ. թիվ 38 հրամանի համաձայն՝ Նաիրա Թևոսյանը՝ նույն թվականի սեպտեմբերի 3-ից նշանակվել է Առաջաձորի միջնակարգ դպրոցի մանկապատանեկան կուլեկտիվի ղեկավար:

3. ԼՂՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 920-Ն որոշման թիվ 4 հավելվածում նշված՝ ԼՂՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկերի համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատության նախկինում մանկապատանեկան կուլեկտիվի կազմակերպչի պաշտոնը վերանվանվել է սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ /ԴԱԿ/:

4. Մինչև վեճի առարկա հրամանի արձակումը Հայցվոր Նաիրա Թևոսյանը ոչ մի կարգապահական տույժ չի ունեցել:

5. Համաձայն Պատասխանողի 01.09.2016թ. թիվ 35 հրամանի «ա» կետի՝ Հայցվորն ազատվել է Առաջաձորի միջնակարգ դպրոցի ԴԱԿ-ի պարտականություններից և նրան տրվել է մասնագիտական մեկ դրույք՝ /22/ դասաժամ ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից և 9-րդ դասարանի դասդեկորությունը: Նույն հրամանի «բ» կետով Արթուր Աբրահամյանը նշանակվել է ԴԱԿ և մաթեմատիկայի ուսուցիչ՝ 5 ժամով:

6. Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել 01.09.2016թ. թիվ 35 հրամանի «ա» կետը՝ Նաիրա Թևոսյանին ԴԱԿ-ի պարտականություններից ազատելու մասին:

7. Վերաքննիչ դատարանի 2017 թվականի մարտի 13-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի վճիռը մասնակիորեն՝ նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատավարձերի տարբերության գումարների բռնագանձման և նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի կրկնապատիկի չափով փոխհատուցում տալու մասով բեկանվել և գործն այդ մասով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

8. Համաձայն «Մարտակերտի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ի 12.06.2017թ. թիվ 123 տեղեկանքի՝ «Սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ» պաշտոնական դրույքաչափը հավասար է ուսուցչի պաշտոնական դրույքաչափին:

9. Համաձայն «Մարտակերտի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ի 2017թ. հունիսի 15-ի N125 թվակիր գրության՝ Առաջաձորի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նաիրա Թևոսյանը 2016/2017թթ. ուսումնական տարում ստացել է 389.175 /երեք հարյուր ութսունհինգ հազար հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ աշխատավարձ:

10. Գերագույն դատարանի դատական նիստում Պատասխանող Ն.Աթանեսյանը հայտարարել է, որ Արթուր Աբրահամյանին Առաջաձորի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն նշանակելու պատճառով ներկայում ԴԱԿ-ի հաստիքը թափուր է:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի դրույթների միատեսակ կիրառության, ինչպես նաև հետագայում նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկայի ձևավորման համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

-աշխատանքային պայմանագրի վերաբերյալ ո՞ր վեճերով են կիրառելի ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ առանձին-առանձին,

-ի՞նչ պետք է հասկանալ «գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների անհնարինություն» եզրույթի տակ:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 11-րդ հոդվածով որպես Հանրապետության տնտեսական կարգի բաղադրիչ՝ տնտեսական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ենթադրում է գործատուին այնպիսի իրավագործությունների տրամադրում, որոնք նրան թույլ կտան իր ռիսկով ընդունել կազմակերպչական և կադրային քաղաքականությանն ուղղված որոշումներ:

Սահմանադրության 57-րդ հոդվածով ամրագրված՝ քաղաքացու աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները, ներառում են, ի թիվս այլոց, աշխատանք փնտրելու իրավունքը, որի էությունից բխում է նաև արդեն ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը:

Համաձայն Պատասխանողի 2016թ. սեպտեմբերի 1-ի հրամանի «ա» կետի՝ 2015/2016թթ. ուսումնական տարում Առաջաձորի միջնակարգ դպրոցում դաստիարակչական աշխատանքները պատշաճ մակարդակով չկազմակերպելու, արտադասարանական աշխատանքները քիչ կազմակերպելու, որոշ պետական տոներ չնշելու, «Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպությունը լիարժեք չգործելու և 2016/2017թթ. ուսումնական տարում արտադասարանական դաստիարակչական աշխատանքները նոր հիմքերի վրա դնելու պատճառաբանությամբ Հայցվորն ազատվել է Մարտակերտի շրջանի Առաջաձորի միջնակարգ դպրոցի ԴԱԿ-ի պարտականություններից և նրան տրվել է մասնագիտական մեկ դրույք 22 /քսաներկու/ դասաժամ ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից ու 9-րդ դասարանի դասղեկությունը, իսկ նույն հրամանի «բ» կետով Արթուր Աբրահամյանը նշանակվել է ԴԱԿ և մաթեմատիկայի ուսուցիչ՝ 5 /հինգ/ ժամով:

Պատասխանողի վերոնշյալ հրամանի «ա» կետը՝ Հայցվորին ԴԱԿ-ի պարտականություններից ազատման մասով, Առաջին ատյանի դատարանի 2016թ. դեկտեմբերի 26-ի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անվավեր՝ առանց օրինական հիմքերի և օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումներով արձակված լինելու հիմնավորմամբ:

Անդրադառնալով Հայցվորի հետ հարաբերությունները լարված լինելու և 2016թ. սեպտեմբերի 1-ի թիվ 35 հրամանի «բ» կետն ուժի մեջ լինելու պարագայում նախկին աշխատանքի պայմանների վերականգնումն անհնարին լինելու Պատասխանողի փաստարկներին, Առաջին ատյանի դատարանը 2017թ. հուլիսի 4-ի վճռում արձանագրել է, որ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասն «անվերապահորեն ելնում է աշխատանքի էական պայմանների փոփոխմամբ աշխատողի խախտված իրավունքների՝ մինչև իրավունքների խախտումը գոյություն

ունեցած վիճակի վերականգնման ամբողջական և լիարժեք ապահովման սկզբունքից>>:

Վերաքննիչ դատարանը, Հայցվորի և Պատասխանողի փոխհարաբերությունները լարված լինելու հիմքով, հնարավոր չի համարել բավարարելու Հայցվորի՝ նախկին աշխատանքում վերականգնելու հայցապահանջը, պատճառաբանելով, որ ԴԱԿ-ի «աշխատանքային գործունեությունը, ի տարբերություն առարկայական ուսուցչի գործունեության, մշտապես սերտ կապի մեջ է գտնվում ինչպես դպրոցի տնօրենի, այնպես էլ նրա տեղակալների ու մյուս ուսուցիչների հետ, ուստի, նրանց հետ ոչ նորմալ հարաբերությունները բացասաբար են անդրադառնում աշակերտների դաստիարակչական աշխատանքների կազմակերպման վրա>>:

Գերագույն դատարանն ընդգծում է, որ վեճի առարկա հրամանի համաձայն՝ Պատասխանողի նախաձեռնությամբ Հայցվորը տեղափոխվել է այլ աշխատանքի, իսկ դատական նիստերում իրենց հաստատումը գտած ապացույցները վկայում են, որ Հայցվորի աշխատանքի էական պայմանների փոփոխությունը կապված է ոչ թե ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի հետ, այլ պայմանավորված է եղել սուբյեկտիվ գործոններով: Տվյալ դեպքում, վեճի առարկա հրամանը հակասում է նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հանգամանքների էական փոփոխության կապակցությամբ պայմանագիրը փոփոխելու իրավունքը սահմանող դրույթներին, որի 467-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանգամանքների, որոնցից էլ էին կողմերը պայմանագիրը կնքելիս, էական փոփոխությունը հիմք է պայմանագրի փոփոխման...: Հանգամանքների փոփոխությունն էական է համարվում, եթե դրանք այնքան են փոփոխվել, որ եթե կողմերը կարողանային դա ողջամտորեն կանխատեսել, նրանց միջև կկնքվեր էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի:

Համաձայն ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով: Մինչդեռ գործի նյութերից նկատելի է, որ կողմերի միջև նման պայմանագիր չի կնքվել և Հայցվորը չի համաձայնել աշխատանքը շարունակել փոփոխված պայմաններով:

Գերագույն դատարանը ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ չի վիճարկում, որ դատարանը, գործի փաստական հանգամանքներից էլնելով, գործատուի և աշխատողի միջև լարված հարաբերությունների առկայությունը կարող է դիտարկել որպես նրանց հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարիություն: Ամեն դեպքում վիճարկվող դրույթը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատվի, թե արդյո՞ք լարված հարաբերությունների պատճառը գործատուի կողմից արհեստականորեն չի ստեղծվում՝ կանխելու համար անօրինական ազատված աշխատողի դատարանի վճռի հիման վրա հնարավոր վերականգնումը:

Աշխատանքի Միջազգային Կազմակերպության թիվ 158 կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է, որ անօրինական հիմքերով ազատած աշխատողին նախկին աշխատանքում չվերականգնելու ապացուցման բեռն

ընկնում է հենց գործատուի վրա: Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշման մեջ ամրագրել է, որ «գործում առկա բազմաթիվ դիմում-բողոքներով, Պատասխանողի, գործով հարցաքննված վկաների տված ցուցմունքներով միանշանակ ապացուցված է այն փաստը, որ լարված են Հայցվորի և Պատասխանողի հարաբերությունները: Նշված փաստն ընդունել և հաստատել է նաև Հայցվորը»:

Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը չի բխում գործի նյութերից, քանի որ ստորադաս դատարանների դատական նիստերում տված բացատրություններում, վերաքննիչ բողոքներում Հայցվորը և Պատասխանողը երբևէ չեն ակնարկել իրենց միջև լարված հարաբերությունների առկայության մասին: Նման ցուցմունքներ չեն տվել նաև Առաջին ատյանի դատարանի՝ 2016թ. դեկտեմբերի 13-ի դատական նիստում հարցաքննված վկաներ, Առաջածորի միջնակարգ դպրոցի փոխստեղծներ Իրա Չաքարյանը և Մխիթար Սողոմոնյանը, ինչպես նաև ԴԱԿ-ի պաշտոնում նշանակված Արթուր Աբրահամյանը /հ. 1 թ.հ. 132-137/:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը 2017թ. մարտի 13-ի որոշման մեջ միայն փաստել է, որ «գործի նյութերում գտնվող բազմաթիվ դիմում-բողոքներով հիմնավորվում է, որ լարված են Հայցվորի և Պատասխանողի հարաբերությունները» /հ.1 գ.թ.195/: Գերագույն դատարանը գտնում է, որ նման եզրակացության հանգելու համար Վերաքննիչ դատարանը բավարար հիմքեր չի ունեցել, քանի որ Հայցվորի դիմում-բողոքներից հետևում է, որ դրանք ուղղված են եղել Սահմանադրությամբ չարգելված բոլոր միջոցներով Հայցվորի խախտված իրավունքները վերականգնելուն, և որ այդ դիմում-բողոքներում Հայցվորը Պատասխանողի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ չի տարածել:

Հետևաբար, վերը շարադրված վերլուծության արդյունքում, Հայցվորի դիմում-բողոքները չի կարելի դիտարկել որպես նրա և Պատասխանողի միջև լարված հարաբերությունների առկայություն, աշխատանքի վերականգնմանը խոչընդոտող հանգամանք, ուստի Գերագույն դատարանը սույն վեճով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չի համարում:

Վերաքննիչ դատարանը վկայակոչելով ըստ հայցի Առնողիկ Սերգեյի Սարգսյանի ընդդեմ «Մարտունու Վ.Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ՝ աշխատանքից ազատելու վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու և նախկին աշխատանքում վերականգնելու մասին ԸԻԴ 1044/02/15թ. քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2015թ. դեկտեմբերի 8-ի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, եզրահանգել է, որ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը սույն գործով կիրառելի չէ: Այդ առումով Գերագույն դատարանը նշում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչած գործի հանգամանքները բոլորովին տարբերվում են սույն գործից, քանի որ նշված գործով հայցվորն աշխատանքից ազատվել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված՝ աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմնավորմամբ, երբ աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չի եղել: Նման պայմաններում աշխատողը չի կարող վերականգնվել իր նախկին աշխատանքում՝ անկախ պայմանագիրը լուծելու հիմքի և կարգի օրինականությունից, քանի որ

կողմերը պայմանագիր կնքելիս իրենց ազատ կամքով նման հնարավորություն չեն սահմանել և նման օրինական ակնկալիք չեն ունեցել:

Գերագույն դատարանը փաստում է նաև, որ աշխատանքից ազատված աշխատողի փոխարեն նոր աշխատողի կողմից նրա հաստիքի զբաղեցրած լինելը չի կարելի դիտարկել որպես գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն: Դա այն դեպքում, երբ սույն գործով Գերագույն դատարանի դատական նիստում Պատասխանող Ն.Աթանեսյանը հայտարարել է, որ Արթուր Աբրահամյանին կրթական աջակցությունների գծով փոխտնօրեն նշանակելու կապակցությամբ ներկայում ԴԱԿ-ի հաստիքը թափուր է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը և արձանագրված նյութական իրավունքի նորմերի խախտումները Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վերոնշյալ հիմնավորմամբ Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Գերագույն դատարանի լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով: Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Տվյալ դեպքում Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված

դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

<<Պետական տուրքի մասին>> ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի <<ա>> կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատական ակտին, Գերագույն դատարանը, հիմք ընդունելով <<Պետական տուրքի մասին>> ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի <<ա>> կետը և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, գտնում է, որ Առաջաձորի միջնակարգ դպրոցից հոգուտ ԱՀ պետբյուջեի պետք է բռնագանձել Նաիրա Թևոսյանի օգտին բռնագանձման ենթակա գումարի երեքական տոկոսը՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար և 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ, որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար: Դատական ծախսերի հարցը մնացած մասերով պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1 Հայցվոր Նաիրա Թևոսյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Վերաքննիչ դատարանի 2017թ. օգոստոսի 31-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017թ. հուլիսի 4-ի վճռին սույն որոշման պատճառաբանություններով:

2. <<Առաջաձորի Ա.Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ից հոգուտ ԱՀ պետական բյուջեի որպես պետական տուրք բռնագանձել Նաիրա Թևոսյանի օգտին բռնագանձման ենթակա գումարի երեքական տոկոսը՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

<<Առաջաձորի Ա.Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ից հոգուտ ԱՀ պետական բյուջեի, որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար, բռնագանձել նաև 20.000 ՀՀ դրամ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**